


241
n-20

150



2016-112

unpublished

5087

ԻՐԱՆՆԵՐՅԱՆ

ՏՆՆԿՐ


ՀԱՏՈՐ Ե .



ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԻԲԱՆՁԱՐ

1846






582-2007








ԻՐԼԱՆՏԱՅԻ

ՏՆԵԿՐ,



ԳԼՈՒԽ Ա

Տնողաց սլարաքը :

ԻՐԼԱՆՏԱՅԻ Պրէյ քաղքին մէկ
 կողմը առանձին ձոր (տէրէ) մը կայ՝ ա-
 նանկ աղուոր որ կարծես թէ Աստուծոյ
 շինած դրախտն է. բոլի կանաչ բլուր-
 ները հայլիս պէս կ'երևնան իրեն սլաթիկ
 լճին մէջ. ձորին բերանն ալ խոշոր ծա-
 ոերով անտառ մը կայ որ սաստիկ հովերը
 կ'արգիլէ. բոլոր դաշտը գոյնգոյն ծաղ-
 կըններով ծածկած է. անանկ որ աչքդ ո՛ր
 կողմն որ դարձընես՝ նոր նոր բաներ կը
 տեսնես: Արկիբը այնչափ բարբեր է որ
 ամէն տեսակ ստղոյ ծառերը իրենք ի-

րենցմէ կը բուսնին . բլուրներուն վրայէն մանր վազուկ ջրեր կ'իջնան անոյշ ձայներով, ու օձի պէս սողալով լճին մէջը կը թափին :

Ատենով առ լճին մէկ կողմը պզտի տընակ մը կար, իրաւցրնէ խաղաղութեան ու երջանկութեան բնակարան, ու բոլոր ձորին մէջ ասկէ զատ ուրիշ տուն չկար : Աստնակը կը բնակէր Վաստոն անունով բարեպաշտ մարդ մը, հետն ալ իր ընկերը ու իրենց երկու տղաքը : Ասոնք հարստութիւն մը չունէին, ու Վաստոնին աւուրչէքովը միայն կ'ապրէին, որ պզտիկ արտ մը կը բանէր, երբեմն ալ որսի (ալ) կ'երթար, կամ լճին մէջէն ձուկ կը բռնէր, քանի մը հատ ալ ոչխար կը պահէր : Իսկ իրեն ընկերը, անունը Ասթեր՝ տնական բաները կը հոգար, կանեփ կը մանէր, կտաւ կը դործէր ու կը ծախէր :

Աս Վաստոնին տնակը ճամբորդներու ու ողորմելի մարդիկներու հիւրանոց մը դարձեր էր . աղքատ չէր եղած որ ներս մտնէր, ու ձեռքը պարապ կամ փորը աւոթի դուրս ելէր :

Բարեպաշտ Վաստոնին բոլոր ջանքը ան

էր որ իր երկու տղաքը բարի քրիստոնէի
պէս մեծցընէ . ինքը երկուքն ալ հաւա-
սար կը սիրէր , բայց քիչ ատենէն իմա-
ցուեցաւ որ անոնք այլևայլ բնութեան տէր
են եղեր : Աւոնը որ առջիննէն էր՝ պղտի-
կուց ՚ի վեր խեռ տղայ մը կ'երեւնար , խա-
ղալ խնտալ շատ կը սիրէր . կիրակի օրե-
րը ամէն բան կը թողուր ու կ'երթար օրն
՚ի բուն իր հասակակիցներուն հետ խաղա-
լով կ'անցընէր : Հայրը շատ անգամ աս
բաներուս համար զինքը կը խրատէր ու կը
յանդիմանէր . և անոր մոլութիւնները տես-
նելով կ'ըսէր . « Աւոն չեմ գիտեր թէ քու
» վերջդ ի՞նչ պիտի ըլլայ : Ատեն մը ջեր-
» մեռանդ ու խեղճ էիր , անոր համար
» մենք ալ զքեզ կը սիրէինք . իսկ հիմա
» քու ծնողքէդ ալ կը փախչիս . ան՛հ որ-
» դեակ , ի՞նչպէս չես ողորմիր մեր ծերու-
» թիւր : Քեզ տեսնեմ , դեռ ժամանակ ու-
» նիս , մէկդի կեցիր քու մոլութիւններէդ ,
» հեռու կեցիր վնասակար ընկերութիւն-
» ներէ՛ որ զքեզ Աստուծմէ կը հեռացընեն
» ու առաքինութեան աղուոր հունտերը
» սրտէդ կը խլեն : Աղթքէդ կը պա-
» դիս , պարտքերդ կը շատնան ու դուն

» քու ուզածներէդ ետ չես կենար: Այն
» որդեակ չէ, մտիկ ըրէ իմ խրատներուս
» ու խելքդ գլուխդ ժողկէ. չըլլայ թէ Աստուծոյ
» տուած պատիժ մը ղրկէ վրայդ, ու ապա
» նանկով խելքքնաս »: Այնպէս սիրտը հօ-
րը խրատներովը կակրողցաւ, խօսք տուաւ
որ ինքզինքը շտկէ, ու հաստատ առաջա-
դրութեամբ մնաց իր մեղքերը խոնարհու-
թեամբ խոստովանեցաւ, ու մեծ զղջում
ցցուց իրեն ըրածներուն վրայ: Եւ
ուրախացան ձերունի ճնողքը ասոր վրայ,
մեծ յոյս ալ առին որ Այն անկէ ետեւ իր
չար սովորութիւններէն ետ պիտի կենայ:

Ազուարդը որ Գաստունին պզտի զա-
ւակն էր՝ խելք անոյշ բնութիւն մը ունէր,
ու Աստուծոյ աչքին պէս կը սիրէր զինքը,
վասն զի շատ աշխատութեամբ ալ մեծցու-
ցեր էր անիկայ: Արկու անգամ ծանր հի-
ւանդութիւններ քաշելով մահուան դուռը
հասեր էր տղան, ուստի իրեն տկար կազ-
մուածքին համար շատ դարմաններու կա-
րօտ եղեր էր. բայց բարեսիրտ ըլլալովը իր
ճնողայը խօսքէն ամենեւին դուրս չէր ել-
լեր: Արքոր Գաստունն ու Այնը գետին
բանկու կ'երթային՝ Ազուարդը ձուկ բրու-

նելու կամ ոչխարները արածելու հետ կ'ըլ-
լար :

Խեղճ Գաստոնը թէպէտ տնորդօք գի-
շեր ցորեկ կ'աշխատէր ապրուստ գտնելու
համար, բայց շատ հեղ ճարը կը հատնէր .
աւելորդ հարստութիւն մը ամենեւին չու-
նենալէն 'ի զատ, շատ անգամ հարկաւոր
բաներէն ալ զուրկ կը մնային : Օ՛հանր
տուրքերն ալ տարուէ տարի կը շատնային,
ու շատ անգամ կը վախնար որ չըլլայ
թէ բոլորովին բացը ելնն : Աստի տես-
նելով որ իրեն տղաքը կրնան իրենք իրենց
պզտիկ արտը մշակել, կանչեց օր մը իր
ընկերն ու ըսաւ անոր . « Ես թեր, քեզի
» բան մը պիտի հարցնեմ, նայի՛մ դուն
» ինչ կը զրուցես : Եր տղաքը բաւական
» մեծցած են . ասկէ ետքը կրնան առանց
» ինձի մեր պզտի դաշտը մշակել, որսոր-
» դութիւն ու ձկնորսութիւն ալ ընել : Ես
» հուպիւն քաղաքը բարեկամ մը ունիմ,
» երթամ անիկայ գտնեմ ու աղաչեմ որ
» զիս նաւահանգստիւն մէջ պաշտօնի մը վը-
» րայ դնէ . ինչուան ամառը հոն աշխա-
» տելէս ետքը, աշնան նորէն հոս կը դառ-
» նամ . գոնէ աս կերպով քիչ մը ստակ
» ձեռք ձգենք » :

Առջի բերան Աստիճակը չհանեցաւ ընկե-
րոջը խորհրդին : Բայց Վաստոն վերջապէս
համոզեց զինքն ու ճամբայ ելելու սխա-
րաստուեցաւ : Կանչեց տղաքը , խրատ տը-
ւաւ անոնց , ապապրրեց որ քանի որ ինքը
դուրսն է ամենեին անսխալ չըլլան իրենց
քրիստոնէական պարտքերը կատարելու .
մօրերնուն մխիթարանք ըլլան , և անոր
խօսքէն դուրս չելին . վերջը ամենուն մէկէն
բարևը տուաւ , տղաքն ալ օրհնեց ու ելաւ
գնաց դէպ 'ի Տուսլին որ Երևանտայի մայ-
րաքաղաքն է :

Տարիներով ան տղաքը բարի նախան-
ձով մէկզմէկ անցնելու կը ջանային՝ քանի
որ հայրերնին Տուսլինի մէջ նաւաւարու-
թեան հետ էր : Վաստոն ալ ամէն տարի
գարունը սկսելուն պէս մայրաքաղաքը կ'եր-
թար , ու երբոր աշունը կը մօտենար՝ նորէն
իր տնակը կը դառնար : Ամէն անգամուն
տղաքը իրենց հօրը դարձին կը սպասէին . ու
հեռուէն տեսածնուն պէս՝ հեալով բլուրնե-
րէն վար կը վազէին , իրենց մօրը կ'իմացընէին
հօրերնուն գալը : Աս ուրախութենէս ետև
հայրը ծոցէն քսակը կը հանէր , կը սպասէր
առջևնին փայլուն արծաթ ստակները . վեր-

ջը կը հանէր Տուպլինէն զնամ զեղեցիկ ըն-
ծաներն ու կուտար ընկերոջն ու տղոյը .
անկէ ետքը ամէնքը մէկէն խաչելութեան
դիմացը ծունկ չորած շնորհակալութեան
աղօթք մը կ'ընէին Աստուծոյ : Գաստոն
Աստուծոյ բարիքը քանի որ կը տեսնէր՝ ա-
ւելի կ'ապսպրրէր Աստուծոյ որ աղքատները
չմոռնայ . « Անոնք ալ մեր եղբայրներն են ,
» կ'ըսէր , պէտք է մեր ունեցածէն անոնց
» ալ բաժին հանենք » :



ԳՂՈՒԽ Բ

Ընկերսիրուծիւն :

ԱՆԳԱՄ մը երբոր Գաստոն Տուպլի-
նէն դառնալու մօտ էր՝ Վ Լոնը առաւօտանց
կանուխ ելաւ որսի գնաց, որպէս զի իրի-
կուան իր հօրը աղէկ հարկինք (զկտաֆէթ)
մը ընեն : Ադուարդ ԸՃին քովը ձուկ կոր-
սար . Ասթերն ալ տունը մաքրելու հետ
էր : Աէս օրուան դէմ Ադուարդը եկաւ,
ցցուց մօրը իր բռնած ձկներն ու ըսաւ .
« Հայրս երբոր ուտէ սա խմ բռնած ձու-
» կերս՝ կարծեմ շատ սլիտի հաւնի .
» բայց չեմ գիտեր ինչ կ'ըլլամ, մարիկ,
» սիրտս կը մարմրի » : — « Ի՞նչ կ'ըսես
» տղաս, ըսաւ Ասթերը . ցաւ մը ունիս » :
— « Զէ մարիկ, բան մը չունիմ, ըսաւ
» Ադուարդը », ու մօրը քովը արտում տխուր
նստաւ, ու ինքն իրեն կ'ըսէր . « Ա՛րբ սլի-
» տի գայ Հայրս որ երթամ գիրկը իյնամ :

» Այսօրուան պէս դեռ չէի կարօտած
» զինքը տեսնելու : Ար յուսամ որ ասիկայ
» վերջի երթան ըլլայ , իր տարիքին ալ
» ձեռք չտար որ անանկ չարաչար աշխա-
» տի : Շատ պիտի աղաչեմ որ մէյմըն ալ
» չերթայ , ալ աղէկ է որ ես նաւաւար ըլ-
» լամ ու հօրս տեղը աշխատիմ ստակ վաս-
» տրկիմ : Այնպէս չէ մտրիկ . հրամանքդ
» ալ թող մի տար որ ասկէ ետքը հայրս
» հուսլին երթայ » : — « Ա՛յլ բարեսիրտ
» զաւակս , ըսաւ մայրը . իրաւքնէ ես
» ալ ասկէ ետե պիտի չթողում որ հայրդ
» երթայ . աս վերջի ճամբորդութեանն ալ
» հաղիւ հաւանեցայ . բայց դուն մի ըր
» որդեակ , սրբէ արցունքդ որ հայրդ չի-
» մանայ թէ լացեր ես » : Ադուարդ ա-
» չունները սրբեց , բայց տրտմած նստաւ ու
» կը մտածէր : Մայրը զինքը զբաղեցնելու
» համար իրատ տուաւ որ նորէն ձուկ բռնե-
» լու երթայ : Տղան ալ հնազանդեցաւ : Բայց
» երկու ժամէն նորէն դարձաւ առանց բան
» մը բռնելու : « Աղբայրս ո՛ւր է , ըսաւ : —
» Անիկայ կերակուրն առաւ որսի գնաց ,
» վերջն ալ հօրդ դիմացը պիտի երթայ » :
» — « Անանկ է նէ ես ալ երթամ

անտառին ներսի կողմերը նայիմ հայրս կու-
գայ [Թէ չէ], ըսաւ, ու շուտ մը դուրս ելաւ :
— « Աեցիր ես ալ հետդ գամ տղաս », ըսաւ
մայրն ու ձեռքէն բռնած մէկտեղ դէսլ'ի
անտառը սկսան երթալ : Հեռուանց տե-
սան որ Վեոնը ծառի մը կռթնած՝ որսի
կը սպասէր : Հոն կանկ առին, որպէս զի
չչփոթեն զինքը. մէյմն ալ յանկարծակի
ետեէ ետե հրացանի ձայներ լսեցին : Վեո-
նը վազեց որսին վրայ, շունն ալ սկսաւ չա-
րաչար հաջել. մէյմն ալ նորէն որ երեցաւ,
ինչ կրնայիս. ետեէն ալ վիրաւորած խոզ
մը քաշկրուտելով կը բերէր : Ասթերն ու Ա-
դուարդը վազեցին տեսան որ կենդանին
դեռ չէր մեռած : « Ինչուան հիմա հայրս չե-
րեցաւ, ըսաւ Վեոնը, բայց քիչ մըն ալ ըս-
պասենք. [Թէ որ չգայ նէ՛ կամաց կամաց
տուն կը դառնանք » : Արկայն ատեն սպասե-
ցին, Վաստոնը չերեցաւ : Քանի որ գի-
շերուան մութն ու ցուրտը կը կոխէր՝ Աս-
թերին սիրտն ալ այնչափ տրտմութիւ կը
լեցուէր. վերջապէս որդուոցը ըսաւ որ ալ
տուն դառնան : Տղաքը մէկ եղան ու խոզն
ալ քաշելով քաշկրուտելով ինչուան տուն
բերին : Արբոր Վաստոնը խիստ շատ ու-

շայաւ, մտմտութիւնք առաւ զիրենք. ան իրիկունք շատ ուշ սլառկեցան, և մէկուն ալ սիրտը չքաշեց որ բերաննին քիչ մը բան դնեն :

Արկրորդ օրը Աւոնը պատրաստուեցաւ նորէն որսի երթալու, որպէս զի քանի մը օրուան կերակուր ճարէ : Հաղիւ թէ տնէն քիչ մը հեռացեր էր, մէյմըն ալ յանկարծ նաւաւարի զգեստով մարդ մը տեսաւ որ դէպ 'ի իրեն կուգար : « Իրլանտայի տնաւ » կը հոս տեղուանքս է թէ չէ » ըսաւ : « Հրամար ես, ըսաւ Աւոնը . Տուալինէն » լուր մը ունիս : — Աղէկ լուր չկայ : — » Ի՞նչ կ'ըսես, կանչեց Աւոնը, չըլայ թէ » հօրս վտանգ մը հանդիպած ըլլայ : — » Արնեկ քու հօրդ, ըսաւ մարդը . հիմա » անիկայ արքայութեան մէջ կը հանդիսի : » — Ի՞նչ կ'ըսես, հայրս մտաւ : Տէր » Ատուած ողորմէ իմ խեղճ մօրս . . . : » Ակու, բարեկամ, եկու մեր տունը. բայց » մօրս մէկէն 'ի մէկ աս քանիս վրայ խօսք » մի բանար » :


Նաւաւարը մտաւ տնակը, երեսը խաչ հանեց, բռնեց Ասթերին ձեռքն ու ցաւալի կերպով մը ըսաւ. « Բարի լոյս, տի-

ԻՐԱՆ. ՏՆԱԿԸ

582-2007



» կին . քու ընկերդ Վաստոնը իր վերջի
» բարևը կը խրկէ քեզի » : Աս բանս երբոր
ընց Ասթեր երեսին գոյնը պատ կըտրեցաւ ,
ու ընկաւ մարեցաւ : Ամէնքը վազեցին որ
օգնեն խեղճին . հազիւ աչքը բացաւ , եր-
կընցուց ձեռքը իր որդուոցը իր որդուոցը ,
որ սարսափած անոր չորս դին կեցեր էին ,
և խղզուկ ձայնով մը ըսաւ . « Խեղճ տը-
» ղաքս , ալ դուք հայր չունիք : Խեղճ
» Ասթեր , կորսընցուցիր քու մէկ հատիկ
» բարեկամդ ու պաշտպանդ : Ո՛հ Վաս-
» տոն , գոնէ մեր գիրկը մեռնէիր , որ քու
» վրադ նայելով քիչ մը մխիթարուէինք .
» բայց Աստուծոյ կամքը օրհնած ըլլայ » :
Աս կ'ըսէր , ու արցունքը աղբիւրի սէս
աչուրններէն կը վազէին : Խեղ մը ատեն կե-
նայէն ետև՝ Ասթերը Ադուարդին ըսաւ .
« Դուն , սիրելի որդեակ , աս դժբախտութիւնը
» առաջուց խնայար , քու սիրտդ խմինէս
» առաջ ցաւով ճմուռեցաւ » : Ատքը դար-
ձաւ ըսաւ նաւախարին . « Քարեկամ , գո-
» նէ սրտով մեզի թէ ինչպէս եղաւ աս
» ողբալի դիպուածը » :
Նաւախարն ալ նստաւ ու սկսաւ պատմել .
« Տասնըհինգ օր մը կայ որ , ըսաւ , կիրակի



» իրիկուն քանի մը հողի, ընկերդ ալ մէկ-
» տեղ ծովեզերքին մօտերը կը պտտտէինք .
» նոյն առաւօտը ողորմած հողին Սուրբ
» Մատոնի եկեղեցին դացեր սրբութիւն ա-
» ոեր էր : Օտիւ արդէն խռոված ըլլալով
» յանկարծակի փոթորիկ մըն ալ ելաւ . մենք
» նաւարանը փախանք՝ ազատեցանք, ու
» սկսանք ծովուն վրայ գլտնուող խեղճ
» ճամբորդներուն համար աղօթք ընել : Ար-
» կինքը սաստիկ կ'որոտար, հովն ալ այն-
» պէս կը փչէր որ ծովը շուտ մը սկսաւ ա-
» լէկոծիլ : Մենք դեռ աղօթքի հետ էինք,
» մէյմն ալ աշտարակին պահապանը իմաւ
» ցուց որ նաւ մը վտանգի մէջ է : Վաւա-
» րանէն ելանք, տեսնենք որ իրեք կայմով
» նաւ մը կը ջանար ծովեզերքին մօտենալ :
» Վաւահանգստին վերակացուն ժողվեց
» նաւալարները, հրամեց որ մակոյկնե-
» ըով (սանտալ) օգնութիւն հանին
» ան խեղճերուն՝ որ արիւն քրտինք մտած՝
» կատղած ալիքներուն դէմ կը կրճուէին :
» Վաւալարները սիրտ չէին ըներ վտան-
» գին դէմ դնելու, որ քանի կ'երթար կը
» սաստկանար : Մէյմնն ալ յանկարծ
» հովը նաւն առաւ ու ժայռի մը վրայ

» ձգեց, այնպէսով ջարդուբուրդ եղաւ բո-
» լոր նաւը: Նաւապետն ու նաւաւարնե-
» ըէն մէկ քանին կը ջանային որ լողա-
» լով ազատին: Բիչ մնաց որ ծովեզերքին
» պիտի մտնենային, մէյմն ալ ուժերնին
» կտրեցաւ, և հազիւ նաւապետը կրցաւ
» ինք զինքը ալիքներուն վրայ բռնել:
» Նաւահանգստին իշխանը նորէն սիրտ
» տալու համար՝ մտտ եղողներուն բարձր
» ձայնով կանչեց. «Յիսուն ոսկի կուտամ
» ուլ որ ազատէ աս խեղճ մարդը»: Բայց
» մէկը տեղէն չշարժեցաւ: Մնատեն Վաս-
» տոն առաջ անցաւ, «Յիսուն ոսկին ձեզի
» ըլլայ ըսաւ. ես իմ կեանքս կը դնեմ, աս
» խեղճը կ'ազատեմ»: Մէկէն հանեց աս
» քսակը տուաւ ինծի ըսելով. «Մտա-
» տա իմ ջերմեռանդուիներս ըրեր եմ, խրդճ
» մտանքս ալ մաքուր է: Թէ որ ես մեռ-
» նիմ, դուն գնա իմ ընկերոջս ու երկուտը
» դոցս որ Երլանտայի տնակին մէջ կը բնա-
» կին՝ ու ըսէ անոնց. «Վաստոնը իր վերջի
» բարեն ու օրհնութիւնը կը ղըկէ ձեզի և
» կ'իմացընէ որ ինքը մեռաւ ուղղափառ
» քրիստոնէութեան մէջ, ու իր կեանքը
» ընկերոջը համար դրաւ»: Բարեկամա-

» բար ձեռքս թօթվեց , մնաս բարով ըսաւ ,
» երեսը խաչ հանելով ցաթկեց մտաւ մա-
» կուկի մը մէջ , դէսլ 'ի երկինք նայելով՝
» ինքզինքը Մտուծոյ յանձնեց , ու սկսաւ
» շուտ շուտ թիերը քաշել , ինչուան որ նաը
» լապետին քովը հասաւ : Արբոր ան խեղ-
» ճը մազ մնացեր էր որ պիտի խղդուէր ,
» Վաստոն անոր թեէն բռնելուն պէս՝ վեր
» քաշեց զանիկայ : Փայլակի պէս շուտով
» մը դէսլ 'ի ծովեզերքը դարձուց մակու-
» կին քիթն՝ ու նոր ուժով մը սկսաւ թիերը
» քաշել : Ա՛նդք ափսոս . հազիւ թէ քանի
» մը գրկաչափ տեղ մնացեր էր ծովեզեր-
» քը հասնելու , մէյմըն ալ մակոյկը ահա-
» գին ալիքի մը տակը թաղուեցաւ : « Աա-
» լապետը բախտաւոր գտնուեցաւ որ մէ-
» կէն 'ի մէկ ծովեզերքէն նետուած չուանը
» բռնելով ազատեցաւ . բայց Վաստոնը
» թաղուեցաւ ծովուն մէջ , ու մակոյկը
» կոնրկի վրայ դարձած՝ մէկդի նետուե-
» ցաւ » :

« Աաւալարը մախաղը բացաւ , ու մէջէն
հին գլխարկ մը հանեց՝ ըսելով . « Աս ցա-
» լալի դիպուածէս քանի մը ժամ ետքը
» ծովը դէսլ 'ի ծովեզերքը ձգեց աս իրեն

» գլխարկը . ես ալ գետնէն առի ու ձե-
» զի բերի : Շատ փնտրուեցինք , ու գեռ մե-
» ռելին մարմինը չգտանք . կրնամ ըսել
» թէ բոլոր Տուպլին քաղաքը աս բանիս
» վրայ ցաւեցաւ » :

Ասթեր գլխարկը ձեռքն առաւ ու ըսաւ .
» Իրաւ , ասիկայ է իմ խեղճ ընկերոջս
» գլխարկը , աս կանաչ ժապաւէնը իր եր-
» թալու օրը Պրէյ քաղքէն գներ էի :
» Հիմա իմացայ թէ ինչո՞ւ աս անգամ եր-
» թալու ատենն այնչափ տրտում էր . ան-
» տարակոյս գիտէ եղեր որ մէյմըն ալ զիս
» պիտի շտեննէ » : Աս ըսաւ ու նորէն սիր-
տը ելաւ , սկսաւ լալով իր տղոցը ըսել .
« Ահա ասիկայ է ձեր հօրը մեզի թողու-
» ցած յիշելիքը : Գոնէ ասիկայ զգուշու-
» թեամբ պիտի պահեմ , որ երբոր մեռնիմ՝
» գերեզմանիս մէջը դնեք » :

Աւոն քիչ մը կերակուր տուաւ նաւա-
վարին , անիկայ ալ շատ չկեցաւ՝ ելաւ
գնաց : Ասթեր ըսաւ իր տղոցը . « Ո-
» րովհետեւ ձեր հօրը մարմինը չկրցանք
» գտնել որ մեր բնակարանին քով թա-
» դէինք , գոնէ երթանք պզտիկ գերեզման
» մը շինենք անոր համար , որպէս զի քա-

» նի որ ան բլուրին վրայ նայինք նէ, յի-
» շնք անոր առաքինութիւնները, և անոր
» նմանելու ջանանք: Ար յուսամ որ Աս-
» տուած զիս ալ երկայն ատեն չթողոր
» աս թշուառ աշխարհքիս մէջ, շուտով
» զիս ալ երկինքը սիրելի ընկերոջս քովը
» կը կանչէ: »: Եւ որն ու Ազուարդը ա-
» չուրնին արցունքով լեցուած՝ իրենց մօրը
» ձեռքը պագին, ու խոստացան որ իրեն
» օգնեն և ձեռքերնէն եկածին չափ զինքը
» մխիթարեն:



ԳՒՄԻՍ Գ

Երկու եղբարք :

ՉՄԵՌԸ տնակին մէջ աշխատելով
անցուցին . Աղուարդը ամէն գիշեր գլուխ մը
աստուածաշնչի պատմութի ու վարք սրբոց
կը կարդար մօրը դիմացը : Շատ անգամ
հօրերնուն վրայ կը խօսէին . մայրերնին ալ
կը պատմէր անոր բարեպաշտ ու քրիստո-
նէական վարքը , որպէս զի իրենք ալ անոր
նմանին : Աղուարդը ոչխարները կը հողար ,
Վեոնն ալ ձմեռուան աղէկ օրերը մօտիկ
եղած անտառներն որսի կ'երթար : Չմեռը
ասանկ անցընելէն ետքը՝ երբոր դարունը վրայ
հասաւ , ու երկիրները բանելու ժամանա-
կը մօտեցաւ , Վեոն սկսաւ իր առջի ջու-
րը բռնել : Հազիւ թէ կիրակի օրերը կէս-
օրուան կերակուրը կ'ուտէր , մէյմըն ալ
սուտումուտ պատճառներով տնէն դուրս
կ'երէր իր ընկերներուն քովը կ'երթար : Աս

Թեր շատ կը վշտանար տեսնելով իր մեծ
տղուն անկարգութիւնները :

Օր մըն ալ աս բանս յայտնի զուրցեց Աշ-
դուարդին . « Աղըայրդ , ըսաւ , նորէն առջի
» ճամբան կը բռնէ . ես կարծէի թէ ինքը
» զղջացած է ըրածներուն վր . բանին գործ-
» քին անհոգ կ'ըլայ , անօգուտ ծախքեր
» կ'ընէ , և կարծեմ թէ օր մը մեր պղտի
» տնակն ալ սլիտի կ'ործանէ : Միայն կի-
» բակի օրերը խաղի անցընելուն գոհ չէ ,
» բոլոր շաբաթն ալ դատարկ կը կենայ .
» որսի գացեր էի ըսելով զմեզ կը խաբէ ,
» թէ որ բան մըն ալ որսայ նէ , անշուշտ
» մեզմէ ծածուկ կը ծախէ ու ստակը խա-
» ղի ու կերուխումի կուտայ : Չեմ գիտեր
» թէ ինչուան էրբ համբերեմ իրեն ըրածնե-
» ըուն . բաւական չէ խեղճ հօրերնուդ հա-
» մար քաշած ցաւս » : Աշդուարդին ալ
սիրտը խշխշայ մօրը բերնէն աս խօսքերս
ըսելով :

Օր մը դաշտին մէջ եղբօրը հանդի-
պելով , « Չեմ գիտեր , եղբայր , ըսաւ , օր
» մը մէկը զմեզ ասկէ վճրնտէ , ու մեր
» ճակտին բրտինքովն վաստրկածը ձեռ-
» քերնէս յափշտակէնէ ինչ պիտի ընենք » :

— « Ի՞նչպէս կրնայ ըլլալ առ բանդ ,
» ըսաւ Վեռնը , հոս ինչ որ կայ նէ մերը
» չէ » : — « Քանի որ մեր պարտքերը կը
» կատարենք՝ մերը կրնան սեպուիլ ասոնք .
» բայց սիլ Վեռն , քեզի ծա-
» ծուկ բան մը ունիմ՝ զուրցելու . մեր
» խեղճ մայրը քու վրադ շատ վշտա-
» ցած է : Քիչ մը ատեն կայ , որ առջի
» սովորութիւններդ ձեռք առեր ես եղեր ,
» և առջի անգամուան պէս խաղի և զուար-
» ճութեանց հետ կ'ըլլաս : Ա՛հ եղբայր ,
» մեր քովը կեցիր , և միտքդ բեր մեր լու-
» սահողի հօրը գեղեցիկ խրատները » :
Վեռն զարմանալով մը նայեցաւ , բայց տես-
նելով որ իր պզտիկ եղբորմէն յանդիմա-
նութիւն կը լսէ , սիրտը շատ կոտորեցաւ :
« Ի՞նչ բանի համար կ'ուզես , ըսաւ , զիս
» անմեղ զրօսանքէս աշարգիլել . գիտեմ որ
» դուք զիս չէք սիրեր . ես շատոնց է որ աս
» բանս իմացեր եմ » : Այս խօսքերս զուր-
ցելէն ետեւ վազեց գնաց գեղին դէպ ՚ի ան
կողմը՝ ուր որ սովորաբար իր ընկերները կը
ժողովէին : Աղուարդը սրտին ցաւէն քիչ մը
ատեն կեցաւ , վերջը վազեց անոր ետեւէն ու
կը կանչէր . « Աղբայր , մտիկ ըրէ ինձի ,

» մտիկ ըրէ, մի թողուր զմեզ . Աստուած
» գիտէ որ մենք զքեզ մեր սրտին պէս կը
» սիրենք » : Բայց Վեոն շատ հեռուն ըլ-
լալով բան մըն ալ չլուսեց : Ադուարդը
տուն դարձաւ , և ինչ որ հանդիպէր էր մէ-
կիկ մէկիկ մօրը պատմեց . Ասթերն ալ լա-
լով մտիկ ըրաւ , ու ետքը իր սենեակը
քաշուելով բոլոր օրը տրամութեամբ ան-
ցուց : Վիշերուան մութը կոխեց , Վեոնը
չերեցաւ . կէս գիշերուրնէ քիչ մը առաջ
խրճիթին դուռը խշրտոցով մը բացուե-
ցաւ , Վեոն ներս մտաւ որ գինուլութենէն
աչքը չէր բացուեր : Արկրորդ օրը առա-
ւօտը կանուխ Ասթեր իր անհնազանդ տը-
ղուն քովը գնաց , ու ըսաւ . « Ա՛հ որդեակ ,
» հօրդ մեռնելէն ետքը մնացած ուժս ալ
» կորսընցուցի : Ա՛լ ես չեմ կրնար աս
» տունս հոգալ , քեզի կը յանձնեմ հօրդ
» թողուցած սղտիկ ստացուածքը : Ա՛տիկ
» ըրէ խրատիս , ընտրէ քեզի բարեպաշտ
» ու իմաստուն ընկեր մը , որուն հետ օրերդ
» երջանիկ ու խաղաղ անցընես . ես կը սոր-
» վեցընեմ իրեն ամական գործքերը , քու
» եղբայրդ ալ քեզի կ'օգնէ » : Վեոնին
սիրտը շարժեցաւ իր մօրը անուշ խրատէն :

Քիչ մը ատեն մտմտալէն ետև ելաւ մօրը
ձեռքը սլազաւ ու ըսաւ . « Վիտեմ որ
» սիրտդ ցաւցուցի , մարիկ , բայց ներէ
» ինծի » : — « Աս քեզի շատոնց ներեր
» եմ , սիրելի որդեակս , ըսաւ Ասթեր . բայց
» դուն խօսք տուր ինծի որ ասկէ ետքը
» քրիստոնէաբար ապրիս և մէյմն ալ չար
» ընկերներու քով չերթաս . չէ՛ նէ մէյմն
» ալ երեսդ չեմ նայիր » : Այդուարդը որ
դռնէն մտիկ կ'ընէր , մէկէն ներս մտաւ ,
գրկեց սիրով եղբայրն ու սլազտուեցան :

Քանի մը շարժէն վերջը Վ և ոն բարե-
սլաշտ ու իմաստուն աղջկան մը հետ սլաւ
կուեցաւ , որուն անունը Վ արդուհի էր .
Ասթերն աչ շատ ուրախացաւ տեսնելով իր
որդուոյն երջանկութիւնը , և իր հարսն ալ
իր զաւակին պէս կը սիրէր : Իսկ Վ արդուհին
անոր սիրոյն փոխարէն՝ կատարեալ հնա-
զանդ եղաւ իրեն : Անկէ ետև խաղաղու-
թիւնն ու զուարճութիւնը նորէն սկսաւ Իր
ընտանի տնակին մէջ : Ասթերն ու Վ ար-
դուհին իրենց ջանքովը կը թեթևցրնէին եր-
կու եղբարց աշխատանքը : Ասթերին սիրտն
ալ ուրախութեամբ կը լեցուէր՝ քանի որ
կը գրկէր իր Աւփիմէ անունով թոռը : Իսկ

Վեոն կամաց կամաց իմանալով որ իր երջանկութիւնը իրեն բարի վարքէն կը կախուի՝ բոլորովին հեռացաւ շար ընկերներէն :

Արդուարդը ուրիշ անգամներուն պէս իրեն ընկած ծառայութիւնները կ'ընէր : Տարուէ տարի ոչխարները կը շահնային , և պէտք էր ուրիշ նոր գոմ մըն ալ շինել որ հոն տեղը պահէն կոմերն ու եզները՝ ու ձմեռը կը գիւրցընէին ու գարնան բերանը կը ծախէին : Իրենց սովորական կերակուրն էր ձուկ ու պարտէզին ընդեղէնները . խկ աւելցած ցորենը վաճառանոցը (փաղար) կը հանէին ու կը ծախէին : Բարեպաշտ Աստիւթերը չէր կշտանար Այ շնորհակալ ըլլալէն՝ իրեն ըրած բարերարութիւններուն համար : Չորս տարի ամբողջ այսպիսի յաջողութեամբ ու խաղաղութեամբ անցուցին :

Օր մը Վեոն դարձաւ իր մօրը , « Պիտես մարիկ , ըսաւ , վաղը Պրէյ քաղաքը ամսական տոնաւաճառ (փանայրը) կայ . կը մտածեմ որ երթամ ծախեմ աս ձմեռուան մէջ Պարդուհիին հետ մանած կտաւդ . ու ան ստակով մէկ քանի հարկաւոր գործիքներ գնեմ » : — « Աղէկ մտածեր ես , ըսաւ Աստիւթեր . կրնաս հետոգ

» որսի միս ու ձուկ ալ տանիլ, Պրէյ քաղ-
» քին մեծամեծները այսպիսի կերակուր-
» ներ կը սիրեն. հայրդ երբեմն երբեմն ծանր
» գնով կը ծախէր » : — « Տայց եղբայրս
» մինակ չկրնար տանիլ, ըսաւ Ադուար-
» դը, կտաւը, վայրի այծն ու աս առա-
» ւօտ բռնած ձուկերս կ'ուզես նէ ես
» ալ մէկտեղ երթամ. այսպէս ըլլայ նէ
» շուտով ալ կը դառնանք » : Աստեր քիչ
մը ատեն մտածելէն ետեւ ըսաւ . « Իրաւ
» կ'ըսես Ադուարդ, ինքը մինակ երթայ
» նէ՝ շատ կը յոգնի, դուն ալ հետը գնա » :
Արկու եղբայրները իրիկուրնէ ամէն բան
պատրաստեցին որ առաւօտուն կանուխ եր-
թան, ու կանուխեկ պառկեցան : Արկ-
րորդ օրը երբոր երկուքն ալ Աստերին մը-
նաս բարով ըսին, անիկայ չկրցաւ իր ար-
ցունքը բռնել ու ըսաւ . « Մեծ կսկիծով
» կը թողում զքեզ Ադուարդ . քու պատ-
» ճառաւդ բոլոր գիշերը անհանգիստ ան-
» ցուցի . աղէկ նայէ, չըլլայ թէ փորձանք
» մը հանդիպի » : — « Տան չկայ, մարիկ,
» մինակ չեմ որ վախնամ, ըսաւ Ադուար-
» դը » : Աստերը գրկեց պագաւ զաւկը
ները, օրհնեց զանոնք ու ճամբայ դրաւ .

հոբըր դարձաւ ըսաւ տրտմութեամբ Վարդուհիին . « Ակո՛ աղջիկս տղոցս հա-
» մար աղօթք ընենք , որ Աստուած հե-
» տերնին ըլլայ » : Վարդուհիին ալ ծունկ
չդրեցաւ անոր քովը , ու ջերմեռանդու-
թեամբ աղօթք ըրին , ետքը երկուքն ալ իրենց
բաներուն հետ եղան . բայց իրենց խելքը
միտքը Վեռնին ու Աղուարդին վրայ էր :



ԳՒՈՒՆ Գ

Եղբայրսիրութիւն :

ԵՒՈՒՆ ու Եղուարդը կանուխկեկ
հասան Պրէյ քաղաքը . երբոր դէպ 'ի վա-
ճատանոցը կ'երթային Վեոն իր եղբօրը ը-
սաւ . « Կարծեմ թէ հոս տեսնելու բան մը
» սխտի ըլլայ » : — « Իրաւ կ'ըսես , ըսաւ
» Եղուարդ , նուագարանի ձայն ալ կայ » :
Քիչ մըն ալ առաջ գնացին , մէյմըն ալ
տեսնեն որ հրապարակին մէջ շատ մը մար-
դիկ լեցուեր են . սյրեւոյլ սեղաններու բո-
լորտիքն ալ կտրիճ տղաքներ՝ ոմանք եր-
գելով գինի կը խմէին , ոմանք ալ նուա-
գարանին ձայնին յարմար կը սլարէին . ան
ուրախութիւն լմննալէն ետե՛նոր գրուած
զինուորներու զգեստը կը հագնէին : « Ի՞նչ
» աղուոր նուագարան է , ըսաւ Վեոն զմայ-
» լելով , ո՞րչափ տարբեր է մեր գեղի սրինգ-
» ներէն : Չեւքէս գար նէ ամբողջ ժամ

» մը հոս կը կենայի, բայց մեզք որ ատեն
» չունինք. հիմկուհիմա երթանք բերած,
» նիս ծախելու, վերջը կուգանք » : —
« Աուզես նէ դուն հոս կեցիր, ըսաւ Ա-
» դուարդը, ես մինակ կրնամ ծախել կը-
» տաւները. վերջը մեր սուլորական տեղը
» եկու, հոն կը նագասեմ քեզի » ըսաւ,
ու առաւ վաճառքները հեռացաւ, առանց
մտածելու թէ ի՞նչ գէշ հետեանքներ պի-
տի ելէր ան բանէն :

Ադուարդ իրեն վաճառքները այնպիսի
գնով մը ծախեց որ ինքն ալ չէր յուսար,
և ինքնիրեն կ'ըսէր. « Ի՞նչպէս պիտի ու-
» բախանայ մայրս երբոր տեսնէ այսչափ
» ստակը՝ որ աս իրիկուն իրեն պիտի տա-
» նինք » : Ժամ մը անցաւ, Վեոն չերե-
ցաւ : Ադուարդը չէր գիտեր անոր ուշա-
նալուն սրտածառը : Ժամ մըն ալ սպա-
սեց, Վեոնը չեկաւ : « Ի՞նչ գէշ բան ըրի,
» ըսաւ ինքնիրեն, որ եղբորս թող տուի
» ան նուագարանները մտիկ ընելու, չըլ-
» լայ թէ իրեն չար սուլորութիւնը միտքը
» եկած ըլլայ. ես եղայ աս բանիս սրտ-
» ճառը » : Ասանկ ըսելով սկսաւ երթալ
գէսլ 'ի ան կողմը՝ ուր որ եղբայրը թողու-

ցեր էր . բայց մարդ մըն ալ չգտաւ հոն :
Ճամբուն մէկ ծայրը կին մը տեսաւ՝ որ նրա
տեր պտուղ կը ծախէր , մտեցաւ անոր ու
հարցուց . « Կիտես ո՞ր գնացին ան մար-
» դիկն որ ժամ մը առաջ հոս կը պարէին
» ու կը զուարճանային » : Պառաւր նայե-
ցաւ անոր ու ըսաւ . « Խեղճ տղայ , դուն
» ի՞նչ բան ունիս ան չար մարդիկներուն
» հետ , թէ որ քու մնասդ չես ուզեր նէ
» փախիր անոնց քովէն : Ե՛նոնք զինուոր
» գրողներ են , որ դքեղ ալ յանկարծ ի-
» բնեց կարգը կ'անցընեն » : — « Ա՛տղա-
» չեմ զուրցէ ինձի թէ ո՞ր գնացին , ըսաւ
» Ազդուարդը , կ'ուզեմ երթալ ու եղբայրս
» փնտուել , չըլլայ թէ անոնց մէջ մտած
» ըլլայ » : — « Կիմացի սրանդոկը գնա-
» ցին , ըսաւ կնիկը , գնա հոն փնտուէ զա-
» նոնք » : Ազդուարդ սրանդոկը մտաւ չմը-
տաւ , ըսեց անոնց կանչուըտելու ձայնը :
Հատ դժուարութեամբ մտաւ մեծ սրահը ,
նաւալարներուն , զինուորագիրներուն ու ե-
րաժիշաններուն մէջէն անցնելով , որոնց շա-
տը չարաչար զինուկցած էին . մէյմըն ալ
տեսնէ որ իր եղբօրը չորս դին առեր են զի-
նուորութեան գրող մարդիկը , և անոնցմէ

մէկը գաւաթ մը օղի (բագը) կուտար իրեն . մէկալն ալ անոր գլխարկին վրայ մետաքսէ փունջ (փիւսկիւ) մը կը կարէր :

Անխոհեմ Վեոնը երբոր տեսեր է թէ Ադուարդը հեռացաւ, խառնուեր է անոնց մէջ, ու բազմութեան հետ ան պանդուկը մտեր է: Քիչ մը ատենէն ետքը զինուոր գրողներէն մէկը կը մօտենայ անոր, ու կը սկսի խօսքի բռնել, վերջը գաւաթ մը օղի կը խմցնէ իրեն . Վեոնը հազիւ թէ կը կըլէ ան գարշելի խմելքը, ալ չկրնալով ինքզինքը բռնել, կը սկսի մէկալնոնց պէս խաղ կանչել ու պարել: Ան ատեն ասոր չորս դին կը ժողվին ան գէշ մարդիկն ու կը ստիպեն որ քանի մը գաւաթ ալ խմէ, ասանկով շուտ մը կը թմրի, խօսք ալ կուտայ զինուորաց կարգը անցնելու, կը մոռնայ իր մայրը, հարսն ու զաւակը:

Ադուարդը իր եղբայրը ան վիճակին մէջ տեսնելուն պէս աչուրները արցունքով լեցուեցան: Շիտակ անոր քովը դնաց, ու չեխելով ըսաւ. « Վեոն, ի՞նչ քան ունիս » դու հոս տեղս: Մոռցար ուրեմն խեղճ » մայրդ, ընկերդ ու զաւակդ: Շուտ ըրէ » հետս եկու . զաւկի տէր մարդու մը կը

» վայլէ՞ այսպիսի տեղուանք կենալ » :

Քոյոր ան տեղը ժողովողները եկան ա-
սոնց չորս դին առին : Օ ինուոր գրողնե-
րէն մէկն ալ Ադուարդը մէկ դի հրելով
ըսաւ . « Աորսուէ մէկ դի , ինչ բան ունիս
» դուն հոս տեղս : Քու եղբայրդ խօսք տը
» էաւ մեզի զինուոր ըլլալու » : — « Այդ
» սէս բան չըլար , ըսաւ Ադուարդը ,
» իմ եղբայրս իրեն խեղճ մայրը , կինն
» ու դաւակը չժողուր : Անն , իրաւցրնէ
» խօսք տուէր ես ասոնց » : — « Ըեմ
» գիտեր ինչ զրուցեմ , ըսաւ Անն , զիս
» խաբեցին , ու զինուկընելով բերնէս խօսք
» առին » : Աս երբոր ընց Ադուարդ , կար-
ծես թէ կայծակ իջաւ գլուխը : « Աս
» ինչ անիրաւութի է ձեր ըրածը , ըսաւ
» կանչելով , որ ասանկ զինով մարդը գլխէ
» կը հանէք : Քուք հայր մայր չէք ունե-
» ցած . դուք տղոց տէր չէք եղած . ինչ
» պատասխան պիտի տաք Աստուծոյ աս
» ձեր ըրած չարութեանը համար » : Աս
խօսքերս մտիկ ընող մը չեղաւ , ան կոշտ մար-
դիկներէն շատն ալ սկսան բարձր ձայնով
խնտալ , ոմանք ալ Ադուարդին վրայ վա-
ղեցին ու սկսան հրոմըշտըկելով դուրս վարն

տել : Աղուարդը կանչեց նորէն իր եղբայրը որ ետևէն գայ . բայց անոնք դէմ գրին , ըսելով թէ « Ինքը իր կամքովը յանձն առաւ » զինուորը ըլլալը , քեզի ինչ . դուն ինչ » բան ունիս հոս տեղս , կորսուէ՛ գնա » :

Ան ատեն Աղուարդ առանց մտածելու խեղճ մօրը իր վրայ ունեցած սէրը , զինուոր գրողներուն գլխաւորին քովը գնաց ու ըսաւ . « Անանկ է նէ ես իմ եղբօրս տեղը » զինուոր կը գրուիմ . վասն զի ես մօրմէս » զատ ուրիշ բան չունիմ , բայց ինքը » մօրմէն զատ զակի տէր մարդ է » : Աւտնն ալ ընկաւ իր եղբօրը վիզը , « Ահ « Աղուարդ , ըսաւ , աս ինչ սէր է որ » իմ վրաս կը ցուցնես » : Հուա մը Աւտնին գլխարկին վրայի մետաքսէ փունջը քակեցին . Աղուարդին գլխարկին վրայ կարեցին , ու ամէնքը մէկ բերան սկսան գովել ան քաջ երիտասարդը՝ որ այսպէս ինքզինքը եղբօրը տեղը գրաւ :

Արբօր ինքը սենեակ մը քաշուեր էր որ իր մօրը նամակ մը գրէ , յանկարծ զօրապետը եկաւ , ու հրամայ իր մարդիկներուն որ պանդոկէն ելնն ու զինուորանոցը քաշուին : Բոլոր երիտասարդները ճամբայ ե

լան, Վեոնն ալ Ադուարդին հետ գնաց
ինչուան զինուորանոցին դուռը : — Հոն
երկուքն ալ սիրով իրարու հետ սլազտուե-
ցան, ու մնաս բարով ըսին մէկմէկու : Ա-
դուարդ նամակը Վեոնին տալու ատեն ը-
սաւ . « Արիկայ մօրս տօւր, ու իմ կողմա-
» նէս ալ շատ բարե ըրէքու ընկերոջդ .
» ըսէ անոնց որ ամենեին ես զիրենք չեմ
» մոռնար, իրենք ալ ինծի համար թող ա-
» ղօթք ընեն : Ատեղճ՝ մայրերնիս չմոռնաս,
» իմ տեղս դու զինքը մխիթարէ, և ասկէ
» ետքը փախիր ան ընկերութիւններէն՝ որ
» կրնան գլխուդ փորձանք մը բերել : Մնաս
» բարով, Աճ երկուքնիս ալ սլազսլա-
» նէ, և իր սուրբ օրհնութիւնը վրաներնէս
» չվերցընէ » . . . Ադուարդը ալ ուրիշ բան
չկրցաւ ըսել, ու արցունքը աղբիւրի պէս
սկսաւ աչքէն վազել : Վեոն նորէն սլազ-
տուեցաւ եղբօրը հետ, ու բաժնուելով ելաւ
գնաց . Ադուարդն ալ իր ընկերներուն քո-
վը դարձաւ :

Ասթեր դրանը դիմացը նստած՝ անհան-
դիստ սրտով որդւոցը դառնալուն կը սպա-
սէր . Վարդուհին ալ երբոր բլուրին վրայ
կեցեր կը նայէր թէ կուգան արդեօք, մէյ-

մին ալ հեռուանց մարդ մը տեսաւ որ արտարնօք դէսլ 'ի տնակը կուգար : Շուտով մը գնաց Ասթերին իմացուց որ Ադուարդը մինակ կուգայ . Վեոնն ալ կ'երենայ թէ վայրի խողի մը ետեւէն ընկեր է անտառին մէջ : Վեոն եկաւ գողի պէս սուներ մտաւ , ու մօրը աչքին երենայու չէր համարձակեր : Ասթեր տեսնելուն պէս զինքը , « Ադուարդը ո՞ր է , ըսաւ » : — « Ա՛յլ մարիկ , ըսաւ Վեոն՝ ձեռուրներովը երեսը գոցելով , ինչ ըսեմ . ես սլատձառ եղայ Ադուարդին . . .

Ասթեր , որ եղածը չէր գիտեր , աս խօսքը լսելուն պէս տակնուվրայ եղաւ . սկսաւ Վեոնին հարցընել . իսկ անիկայ ամրնայէն գետին կ'անցնէր : Ատքը հանեց Վարդուհիին ձեռքը տուաւ աս թուղթը , ան ալ առաւ ու լալով սկսաւ կարդալ .

« Սիրելի մայր իմ ,

» Վերջի բարևս տալէն առաջ կ'աղա
» չեմ որ Վեոնին ըրած յանցանքին թու
» ղութիւն տաս . գիտցիր մարիկ որ մէյ
» մին ալ ձեր քովը չեմ կրնար դառնալ :
» Յուսամ որ եղբայրս զձեզ բանի մին ալ

» կարօտ չթողուր, և իրեն ջանքովը կը մխի
» թարէ զձեզ՝ իմ հեռանալուս համար ու
» նեցած տրտմութիւններուդ մէջ: Այս ալ
» կը ջանամ որ մեծերուս հրամանովը ամսէ
» ամիս իմ թողակիս (էօլէֆէ) կէսը ձեզի
» զրկեմ. իսկ ծախուած բաներուն ստա
» կը եղբայրս ձեզի կը բերէ: Հիմա ես զի
» նուոր եմ: Մեր էր թէ կարենայի մէյմը
» զձեզ նորէն տեսնել, և ունեցած սէրս
» ձեզի յայտնել. բայց աս բանս ինձի ան
» կարելի կ'երևնայ. թող որ նորէն մէկ
» զմէկ տեսնելիս՝ մեր սրտին ցաւերը պի
» տի աւելցրնէ: Թէ որ աս կողմերս քիչ մը
» ատեն կենանք նէ՛ շուտով ձեզի կը գրեմ
» ինչ որ կը հանդիպի, որպէս զի ձեր սիր
» տըն ալ հանգչի: Հաւատ մարիկ որ
» ես չեմ թողուր իմ բարեպաշտութիւնս,
» և ամենեւին պիտի չմոռնամ քու բարի
» խրատներդ: Հիմակուհիմա ընդունէ իմ
» վերջի բարես, և քու օրհնութիւնդ ու
» աղօթքդ ալ վրայէս պակաս մի ըներ:
» Արդուհիին ալ իմ կողմանէս շատ բա
» ըն ըրէ: Շատ մի տրտմիք իմ հեռաւո
» ըութեանս վրայ, օր մը չէ նէ օր մը նո
» ըէն կը տեսնենք մէկզմէկ: Ապօնելով քու

» ձեռքդ , ինչուան վերջի շունչս՝ կը մնամ

Սիրելի մօրս

« Հարազատ ու սիրական որդի
Եդուարդ Գաստոնեան » :

Արբոր Վ արդուհին կարգաց լմնցուց աս
սիրուն նամակը , Ասթերը թուղթը ձեռքէն
առաւ ու շատ անգամ պագնելով ար-
ցունքովը կը թրջէր . ու յիշելիքի մը պէս ա-
նիկայ իր ծոցը պահեց . վերջը ծունկ չոքե-
ցաւ ու աչուրները դէպ 'ի խաչելութե դար-
ձրնելով , « Ատուած իմ , ըսաւ մարած ձայ-
» նով մը , դուն կամեցար որ զաւակս զի-
» նուոր ըլլայ . գոնէ պահպանէ զինքը այդ-
» պիսի ծանր ծառայութեան մէջ , ազա-
» տէ՛ զինքը ամէն փորձանքներէ , ու պա-
» տերազմական պատիւներու մէջ բարե-
» պաշտ ու խոհեմ՝ պահէ զինքը : Ինծի ալ
» աս շնորհքը ըրէ որ գէթ մէկ անգամ մըն
» ալ մեռնելէս առաջ տեսնեմ զինքը՝ ասկէ
» զատ երկրիս վրայ ուրիշ բանի չեմ փա-
» փաքիր » :

Աս աղօթքս ընելէն ետև ոտք ելաւ , սրբ-

բեց արցունքը , ու երբոր իր սենեակը մը-
տաւ՝ մէյմն ալ աչքին դպաւ ան քնարը
որ Ադուարդը երբեմն երբեմն անուշ ձայ-
նով կը զարնէր : « Ա՛ռ ատ քնարը , ըսաւ
Վարդուհին , ու անկողնիս գլխուն վերևը
կախէ , որպէս զի քանի որ ասիկայ տես-
նեմ՝ յիշեմ իմ՝ կորսընցուցած զաւակս » :



ԳԼՈՒԽ Ե

Բարի զուակ :

ԵՂՈՒԱՐԴԻՆ քրած վեհանձնական
առաքինութիւնը շուտ մը տարածուեցաւ
բոլոր զօրքին մէջը, և զինուորները վարմա-
նալով մէկմէկու կը սպառմէին : Աս լուրը
ինչուան Սիբթոն անունով զօրապետին
ականջը հասաւ, որ Եղուարդին ալ զօրա-
պետն էր . ուստի կանչել տուաւ ան ե-
րիտասարդը, ու անոր հասակին ու ազ-
նուական կերպին վրայ զարմացած՝ « Գու
» քաջ զինուոր մը կ'երևնաս, ըսաւ, անունդ
» ի՞նչ է, ո՞ր գաւառը ծներ ես » : —
« Անունս Եղուարդ է, ըսաւ, և ասկէ
» քանի մը մըդն հեռու առանձին ձոր մը
» կայ՝ հոն ծներ եմ. իմ լուսահոգի հօրս
» տունն ալ Իրլանտայի տնակ կ'ըսուի » : —
« Գիտեմ, գիտեմ, լսեր եմ ատ անունը, Իր-
» լանտայի տնակին վրայ ալ շատ գովա-
» սանք լսեր եմ : Աւրեմն դուն Գաստո-

» նին տղան ես, որ Տուպլինի նաւահան,
» գըստին միջ բարեկամներէս մէկը ալէ-
» կոծութենէ ազատելու համար մեռաւ » :
— « Հրամար ես, ըսաւ Ադուարդը » : —
« Օքեզ ճանչնալուս իրայ շատ ուրախա-
» ցայ . պատրաստ եմ ձեռքէս եկած բա-
» ըիքը քեզի ընելու » : — « Թողութիւն ը-
» ըէ, հրամանքէդ բաժնուելէս առաջ կըր-
» նամբ բան մը խնդրել » : — « Օրուցէ
» տեսնենք ինչ է խնդրածդ » : — Ադուարդ
առջի բերան քիչ մը ամչցաւ, բայց ետ-
քը համարձակելով ըսաւ . « Տունը խեղճ
» ու հիւանդոտ սրտաւ մայր մը ունիմ
» որուն արդէն հօրս մահը իրեն սաստիկ
» ցաւ եղեր էր, հիմա որ զիս ալ կորսն-
» ցուց՝ աւելի թշուառութեան միջ պիտի
» իյնայ . թէ որ հրաման տասնէ ամէն ա-
» միս իմ թողակիս կէսը իրեն զըկեմ .
» վասն զի աւելի կ'ուզեմ ես հացով ու
» ջրով ասլրիլ՝ քան թէ մայրս անօթի թո-
» ղուլ » : — Օրապետը աս բանս ընելով
զարմացաւ . ու քիչ մը մտածելէն ետքը
ըսաւ . « Աի վախեր քու խնդիրքդ կը
» կատարեմ . ուրախ եմ որ այսպիսի ազ-
» նուական զինուոր մը ունիմ իմ զօրքերուս

» մէջ » : Ազուարդ շնորհակալ եղաւ զօրասպետին ու դուրս ելաւ :

Քիչ ատենի մէջ իր ընկերները անցաւ թէ զէնքերը վարպետութիւն գործածելու՝ և թէ իր պարտերուն զգուշաւոր ըլլալու կողմանէ : Որչափ որ հնազանդ ու հպատակ էր իրեն գլխաւորներուն, այնչափ ալ անուշութեամբ կը վարուէր գունդին մէջ եղած զինուորներուն հետ, անանկ որ ամէնքը մեծ համարմունք ունէին վրան :

Քանի մը շաբթէն ետքը գունդին հրաման եկաւ որ Տուպլին երթան : Ազուարդ շատ ուրախացաւ երբոր տեսաւ ան քաղաքը՝ ուր որ իր հայրը այնպիսի մեծանձնութեամբ ինքզինքը զոհ ըրեր էր ընկերոջը համար . բայց հոն հասնելէն առաջ՝ զօրասպետը անոր բարի վարմունքին փոխարէն յիսնապետ ըրաւ զինքը . բոլոր ընկերներն ալ եկան իրեն շնորհաւորութիւն ըրին : Ազուարդ աչուրները արցունքով լեցուած՝ շնորհակալ եղաւ իր բարերարին, վերջը ճամբայ ելաւ Տուպլին երթալու . հոն որ հասան՝ ամենուն բերնէն իր հօրը գովասանքը կը լսէր, և շատ անգամ երբոր ձեր նաւապետները կը պատմէին Վաստոնին մեռնի-

ը, սրտերնին ելելով կողքային, մանաւանդ երբոր կիմանային թէ ան յիմնասպետը Պաստոնին զաւակն է :

Ան գունդը որուն մէջ էր Ադուարդը՝ տարի մը ամբողջ Տուսպին կեցաւ, անոր համար դիւրին ճամբով իրեն թոշակին կէսը ամէն ամիս իրեն մօրը կըրկէր :

Արբոր Ադուարդը միտքը դրեր էր որ քանի մը շաբթուան համար հրաման առնէ՝ ու երթայ տեսնէ նորէն իր մայրը, մէյմին ալ Անտրայէն հրաման եկաւ որ բոլոր բանակը շուտով դէպ'ի Ապանիա երթայ : Հազիւ թէ քիչ մը ժամանակ ունեցան զինուորները իրենց բաները սլատրատտելու, սլէտք եղաւ որ նոյն օրը մէկէն սլատերազմական նաւերու մէջ մտնեն, ուստի շուտ մը երկաթը վերուցին, բոլորը մէկէն առադաստները բացին ու դէպ'ի Ապանիա սկսան երթալ :

Ասթեր շատ տխուր թեամբ անցուց ան օրերն որ իր սիրելի զաւակէն բաժնուեր էր. աչուրները անդադար արցունք թափելէն առնանկ տկարացեր էին՝ որ իր թոռը Աւիիմէն թեւէն բռնած այնպէս կը սլտրտցընէր ուզած տեղուանքը : Ամէն ատեն իր սիրե-

լի զաւակը կը յիշէր . երբեմն ալ Ադուար-
դին քնարը մօտիկ ծառի մը վրայ կախել կու-
տար որ անուշ հոլը զարկած ատենը թելե-
րը թրթռալով՝ ողբալի երգ մը կը ձևացընէ-
ին : Արբեմն ալ Վարդուհին խեղճ Ասթերը
զբաղեցընելու համար՝ Ադուարդին երգած
երգերէն մէկը կ'երգէր : Ան ատեն Ասթե-
րին սիրար ելելով կըսէր անոր . « Բու
» ձայնդ ալ անուշ է , աղջիկս , բայց մեղք
» որ Ադուարդիս ձայնը չէ » : Աերակուրի
ատեն երբոր Ասթերին դիմացը ձուկ կը-
դնէին , ալ ինքզինքը չկրնալով բռնել՝ այս-
պէս կըսէր . « Ինծի կերևնայ թէ հիմա
» կուան ձուկերը ան համը չունին՝ ինչ
» որ ատեն մը Ադուարդիս բռնածները
» ունէին , քանի որ խեղճ զաւակս ինծովէ
» հեռացաւ ամէն բան ինծի փոխուած կերև-
» նայ » :

Ադուարդին Սպանիա երթալէն ետև
ամիսներ անցան , Ասթերը նամակ չառաւ
իրմէ : Աս բանիս վրայ իր ցաւերը աւելցան .
ան թողալին ալ որ առաջ իրեք ամիսը մէյ-
մը ձեռքը կը հասնէր՝ անկէ ետքը մէյմըն
ալ չեկաւ . աս բաներս այնչափ մտմտուք
եղան իրեն որ անշուշտ տղուս դժբաղդութի

մը հանդիպեր է կըսէր, ու օրերը ախու-
վախով կ'անցընէր : Վերջապէս սիրտը չդի-
մանալով ան նեղութեք՝ օր մը ըսաւ Վեո-
նին . « Այլ տղաս , վեց ամիս է որ Ն-
» դուարդէն նամակ չենք առած , չըլլայ թէ
» փորձանք մը հանդիպած ըլլայ իրեն » :
Ըստ քանէս Վեոնն ալ շփոթեցաւ , ու աս-
դին անդին ինկաւ որ եղբօրը վրայ տեղե-
կութիւն մը առնէ . բայց բան մը չկրցաւ
իմանալ : « Պէտք է որ դուն Տուսպին եր-
» թաս տղաս , ըսաւ Ասթեր , ու եղբօրդ
» վրայ մէկուն մէկալին հարցընես . ո՞վ դի-
» տէ , կարելի է թէ մեռած , կամ սաստիկ
» հիւանդացած ըլլայ » : Վեոնը յանձն
առաւ Տուսպին երթալը . հետը քանի մը
շապիկցու կտաւ ալ առաւ որ Ասթերն ու
Վարդուհին Ադուարդին զրկելու համար
մաներ էին . ասոնք ասլըսպրեցին Վեոնին
որ ըսէ իրեն որ շուտով գայ մէյմը զերենք
տեսնելու :

Ճամբայ ելաւ Վեոնն ու յաջողութեամբ
Տուսպին հասաւ : Շիտակ դէպ ՚ի զինուո-
րանոցը գնաց՝ կարծելով թէ եղբայրը հոն
է . բայց իմացաւ որ վեց ամիսէն աւելի էր
որ բանակը Սպանիա Սարակոսա քաղքին

վրայ գնացե՛ր էր : Շատ տրտմեցաւ Վեռն
իր եղբօրը երթալուն վրայ . հասկըցաւ ա
նոր նամակ չգրելուն պատճառը . հիմն
լինչ երեսով մօրս առջևը ելլեմ, կրտէր . լինչ
պէս տանիմ իրենն աս գէշ լուրը . ես եղայ աս
ձախորդութիւններուս պատճառը :



ԳՂՈՒԽ Գ,

Անխոհեմութեան ու բարկութեան դէշ
հետեանքները :

Անն զինուորանոցէն ելաւ , սկտաւ ծո-
ւնն եզերքը վեր վար քալել ու մտմտալով կը
պըտրտէր : « Ի՞նչ պիտի ըլլայ խեղճ մայրս ,
» կ'ըսէր ինքնիրեն , երբոր լէ՛ թէ Ադուար
» դը Ապանիա գնացեր է : Աս եղայ սս
» թշուառութիւններուն սրտաճառը : Աար-
» ծես թէ Ադուարդին ձայնը կը լսեմ որ
» երեսս կուտայ իմ յանցանքս , որ մեր
» ընտանեացը գլխուն այսպիսի փորձանք
» բերի : Ի՞նչ պիտի ըլլամ ես , խղճմտան
» քրս ալ զիս անդադար կըտանջէ » : Ա-
սոնք մտմտալով ծովուն եզերքը ժուռ որ
կուգար , մէյմըն ալ տեսաւ շատ մը անգ-
ղիացի նաւաւարներ որ անկէ կ'անց-
նէին : Ասոնց մէջ տասներհինգ տասներկեց
տարեկան կտրիճ մըն ալ կար գլուխը ծո-
ւային խոտերէ պսակ մը դրած՝ վրայէն ալ

գոյնզգոյն ժապաւէններ կախուած . և ալ մէնքը մէկ բերան ան քաջ երիտասարդը կը գովէին՝ որ ծովային պատերազմի ատեն յաղթող գտնուեր էր : Գնացին ասոնք ան տեղը առաջուց պատրաստուած վրաններուն տակը նստան , յաղթող կտրիճն ալ մէջերնին . նաւաւարները խառնափնդոր սեղան նստան , ու տեսակ տեսակ կերակուրներէն ետեւ՝ սկսան Գաղղիայի ազնիւ գինիներ խրմել :

Վեոն գնաց կծկրտած նստաւ վրանին դրան քովը , և կերակուր ուտողներուն կը նայէր . մէյմըն ալ նաւաւարներէն մէկը կէս մը գինովցած՝ տմարդութեամբ մը հըրեց Վեոնը : « Այլ սրկէց , ըսաւ . ճամբուն » վրայ ի՞նչ կեցեր ես » : Վեոնին գլուխը տաքցաւ « Բեզի ի՞նչ ըրի որ կը հըրես , ըսաւ . չէիք կրնար անուշութիւն ճամբայ ուզել » : « Գեո կը խօսիս , ըսաւ նաւաւարը : Շուտ կորսուէ սրկէց , թէ չէ՝ հիմա զքեզ ծուխի ծուխի կ'ընեմ » : Վեոն աս խօսքերէս կրակ կտրեցաւ , ու ալ ինքզինքը չկրնալով բռնել՝ ուժով մը մէկդի հըրեց ան նաւաւարն ու ըսաւ . « Բեզի պէս անզգամ , հիմա » ես քեզի ցըրնեմ թէ Իրլանտացի ի՞նչ

» ըսել է » : Այս համարձակ խօսքերէս
մէկալ անգղիացի նաւավարներն ալ կատողե-
ցան , ու ամէնքը մէկէն Վ Լոնին վրայ թա-
փելով՝ սկսան հայհոյել ու չարաչար նախա-
տել զինքը : — « Այս անգ զամին ծովու բաղ-
» նիք մը պէտք է , ըսաւ անոնցմէ մէկը » : —
« Չէ , ըսաւ մէկալը , պէտք է հետերնիս Ան-
» գղիա տանինք որ աս արջուն սորվեցը-
» նենք Իրլանտայի անտառներուն մէջ բնա-
» կիլը » : Այս բանս երբոր ըսեց Վ Լոն , սկը-
սաւ կանչել թէ մայր ունիմ , տուն տեղ ու-
նիմ . բայց տեսնելով որ բանը բանէն անցեր
է , ջանաց որ գոնէ կատղած նաւավարները
հաշտեցնէ : « Այն համար ը ըսայ , ըսաւ ,
» թողուցէք զիս , ես ձեզի վնասելու միտք
» չունէի . խեղճ հօրս Վաստոնին հոգւոյն
» համար ը ըսայ՝ որ աս նաւահանգրտիս մէ-
» ջը մեռաւ , թողուցէք զիս » : — « Սուտ է ,
» ըսաւ ծեր նաւավարին մէկը , Վաստո-
» նին տղան չես . անիկայ շատ անգամ գո-
» վեստ կրկսուէր իր բարի զաւկրներուն
» վրայ . ո՞վ կը հաւտայ քու խօսքիդ » : Վ Լոն
տեսնելով որ անուշուժք ալ չկրցաւ անոնց
սիրտը առնել , կ'ուզէր փախչիլ . բայց անգ-
ղիացիները երբոր տեսան որ մէկ հոգի մը

ամենուն դէմ կը դնէ, սաստիկ կատղեցան, ու ամէնքը մէկէն վրան վաղեցին, չուաննե-
րով կապկըպեցին, ու բերին նաևու մը մէջ
դրին որ ճամբայ ելելու վրայ էր: «Վաւա-
պետին ալ ըսին թէ «Մը մարդը յանձն
» առաւ որ մեզի հետ դէպ'ի Մնգղիա ճամ-
» բորդով թիւն ընէ, բայց չափէ դուրս գի-
» նով ըլլալուն՝ չէր կրնար քալել, անոր հա-
» մար կապեցինք որ չփախչի»: — «Վա-
ւապետը աս խօսքերէս խաբուելով, «Շատ
» աղէկ, ըսաւ, տարէք նաևուն մէկ կողմը
» թողուցէք զինքը, որ ինչուան վաղը առա-
» ւօտ քնանայ. կարելի է որ զինովու թիր
» անցնի նէ՛ խնքըր գլուխը կուգայ»: Վեոն
կ'ուզէր ինքզինքը արդարացընել. բայց
անոնք սրտաւրով կանչուրուտելով անոր ձայ-
նը խափանեցին: Ղոթեցին զինքը նաևուն
մէկ անկիւնը, վրան ալ թաց խսիր մը ձգե-
ցին, և այսպէս փակուած մնաց՝ առանց
բան մը ընելու: Սկսաւ խեղճը լալ, օգնու-
թիւն կանչել, բայց լսող չկար: Ինչ զար-
հուրելի գիշեր էր որ անցուց դժբախտը ան
մութ բնակարանին մէջ: «Ո՛վ Վեոն, կը
» սէր ինքնիրեն, ինչ բանի համար եկար, ու
» ինչ փորձանքի մէջ ընկար: Եղուարդը

» Ապանիա սլատերազմ կ'ընէ իմ տեղս , ես
» փոխանակ իրեն հանդիպածէն խեղք սոր
» վելու՝ ինքզինքս նոր նոր փորձանքներու
» մէջ ձգեցի : Տես թէ բարկութիւնը ին
» չուան ուր հասուց զիս : Ի՛նչ պէտք էր
» ինծի ան լիրբ նաւաւարին սլատասխան
» տալ : Ա՛հ հիմա աս նաւուս մէջը արգի
» լած մնացի . մէյմըն ալ երբ պիտի տես
» նեմ իմ հայրենիքս . ո՞վ պիտի հողաց իմ
» խեղճ մայրս , ընկերս և պզտի զաւակս :
» Ա՛լ ես արժանի չեմ արևուն լոյսը տես
» նելու , և Աստուած որ արդար է՝ շատ
» աղէկ ըրաւ որ ես աս պատիժը քաշե
» լով խեղք սորվիմ : Ա՛վ Ադուարդ , ա՛հ
» եղբայր , թէ որ իմ վիճակս գիտնայիր...» :

Ի և ոն բոլոր ան գիշերը այսպիսի բաներ
մտածելով անցուց : Ա՛ն մութ ու թաց տե
ղին մէջ խղճմտանքը մէկ կողմանէ զինքը
կը խայթէր , քաղցն ու ծարաւը՝ քնհատու
թիւնն ալ մէկալ կողմանէ կը շարչորկէր :
Վ երջապէս տեսնելով որ ամենուն երեսէն
ընկեր է , ինքզինքը Աստուծոյ կամացը
յանձնեց . ծունկ չորեցաւ , աղօթք ըրաւ , ու
Աստուծմէ թողութիւն խնդրեց իրեն ըրած
մեղքերուն համար , և Ա՛յ յանձնեց մայրը ,

կինն ու զաւակը : Ան աղօթքէն քիչ մը մը
խիթարուելով շուտով մը քունը տարաւ :

Արկրորդ օրը նաւաւարները եկան խրն ,
տալով իրեն բանտին դուռը բացին . « Բա
» ըի լոյս բարեկամ , ըսին , գինուլուծիւնդ
» անցան . նաւապետը կը հարցնէ թէ երբ
» պիտի սկսիս աշխատիլ » : Աւոն աչուը
ները շփշփելով առանց բան մը խօսելու ա
նոնց ետէն գնաց : Աւապետը բարե տու
աւ իրենն ու ըսաւ . « Դուն կրնաս աղէկ
» նաւաւար ըլլալ , բայց գիտցած ըլլաս որ
» մեց տարիէն առաջ չես կրնար քու հայ
» ըննիքդ դառնալ : Յուսամ որ քու սարտ
» քերդ աղէկ կը կատարես , ու մեզի ալ
» սիրելի կ'ըլլաս » : — « Իմ յանցանապս
» սպտիժն է ասիկայ , ըսաւ Աւոնը . մօրս
» դէմ ըրածներուս համար կըքաշեմ աս բա
» ներս . փառք Աստուծոյ : Օխ ուր որ
» կ'ուզէք տարէք , առանց տրտնջալու ամէն
» բանի պիտի համբերեմ : Արյուսամ որ
» Աստուած աս սպտիժս զրկեց նէ , կ'ո
» ղորմի սպռաւ մօրս , ընկերոջս ու զաւկիս :
» Այժմէ Աստուած ինձի շնորհք տայ , որ
» աս փորձանքովս խեղ սորվիմ , մէկ օր
» մը ձեզի ալ շնորհակալ կ'ըլլամ , որ զիս

» չար մտքով հոս բերիք : Հիմկուհիմա
» ես ձեր ըրած չարութեանը կը ներեմ .
» վասն զի մեր ուղղափառ կրօնքը կըստ
» տուիրէ՝ որ մեզի մնաս ընողին թողութիւն
» տանք » : Աս խօսքերս մեծ տպաւորութի
ըրին ան կոպիտ նաւաւարներուն վրայ . շա
տը սկսան մէկզմէկ մեղադրել որ այնչափ
անվայել կերպով վարուեր էին ան մար
դուն հետ , որ այնչափ որդխական գութ ունի
իր մօրը և այնչափ սէր իր կնկանն ու զաւ
կին վրայ : Ան օրէն ետև չէ թէ միայն հան
գիստ թողուցին զինքը , այլ նաև կերպով մը
իրենց ըրած անիրաւութեանը հատուցմունք
մը ընելու համար զինքը կըմխիթարէին : Ա և ոն
վարժեցաւ իր տխուր միճակին , շատ մեծ
ըրկանքներու համբերեց իրեն յանցանքնե
րուն թողութիւն գտնելու համար , և իր
լաւ վարմունքովը բոլոր ընկերներուն բարի
օրինակ եղաւ : Ամէն օր իր աղօթքները կ'ը
նէր , կ'իրակի օրերն ալ նաւուն մէկ անկիւ
նը կըքաշուէր ու ջերմեռանդութեամբ կը
կարդար պատարագի աղօթքները , իրեն զի
տաւորութիւնը սուրբ եկեղեցւոյ գիտաւո
րութեանը հետ միացընելով : Ասանկով իրեն
գլխաւորներն ու ընկերները մեծ համարմունք

առին վրան : Օղի խմելը բոլորովին վերջա-
ցուց , բերնէն ամենեւին հայհոյանք չէր հա-
ներ , կռիւ ընելէն միշտ կը փախչէր , ու
շատ անգամ կուռող նաւավարներն ալ մէկ
մէկու հետ կը հաշտեցընէր :



ԳՂՈՒՒՍ Լ

ՆԳՈՒԱՐԴԻՆ ՔԱՉՈՒԹԻՆՆԵՐ :

Ան բանակն որ Անգղիացիք Սպանիայի Սարակոսա քաղաքին վրայ զրկեր էին, շատ պատերազմներու յաղթեց, Նգուարդին ալ շատ քաջութիւններ ըրաւ թշնամեաց դէմ. ամէն անգամուն պատերազմին տաք կողմերը կըմտնէր և իրեն քաջասրտութեամբն ու աշխուժութեամբը կըրցուցընէր թէ զօրապետ ըլլալու արժանի մարդ է: Ամէնքն ալ զանկիկայ կըսիրէին ու կըսատուէին:

Օր մը երբոր թշնամիներուն հետ սաստիկ կռուելէն ետքը՝ Նգուարդ ու իր ընկերները կըրակին բոլորտիքը նստեր կ'երգէին, մէյմըն ալ յանկարծակի պոռալու կանչուրոտելու ձայն մը առին: Օ ինուորնեքը ըսելնուն պէս՝ մէկէն ոտք ելան ու արիւնոտ զէնքերնին ձեռք առին: Նգուարդ հրամայ առնոց որ առանց ձայնի իր ետևէն գան: « Ար-

Թանքնայինք ինչ բան կայ, ըսաւ » : Ակրդե-
լով լեռներուն վրայէն վար իջան ինչուան
սղտի անտառը՝ ուսկից որ թշնամիներուն
բանակը կերենար : Ազուարդ նայեցաւ տե-
սաւ որ թշնամիներուն մէկ գունդը զօրա-
վար մը գերի բռներ կը տանին : « Չեզ
» տեսնեմ ընկերներս, ըսաւ իրեններուն,
» շուտ մը սրւոնց վրայ վազենք, վասն-
» զի թշնամիները մեր զօրապետներէն մէկը
» գերի բռներ են, սէտք է որ շուտով ա-
» զատենք զինքը » : Այս ըսելով՝ իրլանտա-
ցի զինուորներուն հետ մէկ տեղ վազեց
շուտ մը հասաւ վրանին և թէպէտ ասոնք
անոնցմէ քիչուր էին, բայց գերի ընկած զօ-
րապետը ձեռքերնէն յափշտակեցին : Այս զօ-
րապետը տէրութեան հրովարտակը Ա-
զուարդին բերելու ատեն՝ ճամբան մոլորե-
լով թշնամիներուն ձեռքը ընկեր էր : « Ահա
» ազատեցար, ըսաւ անոր Ազուարդը,
» ուրեմն հիմա օգնէ մեզի որ աս թշնամի-
» ները ցրուենք : » Օջորապետը իրեն ազա-
տողներուն մէջը խառնուեցաւ, սուրը ձեռ-
քը առաւ, և թշնամիներէն շատը զարնե-
լով գետինը կը փռէր. անոնք երբոր տե-
սան որ իրենց գերին ձեռքերնէն ելաւ՝ սաս-

տիկ կատողեցան , և յուսահատութեամբ սկսան պատերազմիլ : Ան կուռին ատենը թշնամիներէն մէկը կատաղութեամբ վազեց գերի բռնուած զօրապետին վրայ , և քիչ մը նաց որ զինքը հրացանով սլիտի զարնէր՝ թէ որ Ադուարդը թրովը զանիկայ շտպաննէր : Ասանկով իրլանտացիք թշնամիներուն ետեւէն վազելով ինչուան իրենց տեղը փախուցին :

Չօրապետը շատ շնորհակալ եղաւ Ադուարդին զինքը ազատելուն համար , և խօսք տուաւ որ աս բանս մեծ զօրապետին ականջը հասցընէ . իրլանտացի զինուորներն ալ գովելով սիրտ տուաւ անոնց . ետքը հանեց քսակն ու անոնց տուաւ , որ մէջի եղած ստակը մէջերնին բաժնեն : Անկէ շուտ մը գնացին Աիլթիոն զօրապետին , որ հանդիպած բաները լսելով շատ զարմայաւ : Գերութենէ ազատած զօրավարը Աիլթիոնին րսաւ . « Քանի մը որ է » որ նաւէն ելեր եմ , և շատ թղթեր բերեր եմ տէրութեան կողմանէ , որոնց » մէկն ալ հրամանքիդ համար է : Անծ » զօրապետը լսելով հրամանքիդ քաշած » նեղութիւնները , զիս քու տեղդ զօ-

» րապետ դրաւ աս բանակին, և հրաման
» քիչ կը յանձնէ բոլոր սլատերազմին
» սպարապետութիւնը. և կը հրամէ որ
» շուտով Վոնտրա դառնաս իմ եկած նա
» ւովս » : Ախբթոն աս բանս ընելուն պէս՝
ուրախութենէն ինչ ըլլալը չէր գիտեր . խակ
Նդուարդ որ հոն տեղն էր, երբոր իր զօրա
պետին երթալը ընց շատ տրտմեցաւ : Իմա
ցաւ Ախբթոն աս բանս, ու ըսաւ անոր. « Այ՛
» տրտմիր Նդուարդ իմ բաժնուելուս հա
» մար . վասն զի Վամպեր զօրապետն ալ
» ինծի պէս սէր ունի վրադ . իր կեանքը
» ազատելուդ կողմանէ ալ քեզի երախտա
» գէտ պիտի ըլլայ » : — « Այնպէս է, Ն
» դուարդ, ես զքեզ ամենևն չեմ թողուր,
» ըսաւ Վամպերը » . և սկսաւ սլատմել
Ախբթոնին թէ ինչպէս Նդուարդ զինքը
մահուանէ խալըսեր էր : « Աստուծոյ ճամ
» բաներուն խեղ չհամիր, կանչեց Ախբ
» թոնը . աս երիտասարդը որ քու կեանքդ
» երկու ժամ առաջ ազատեր է՝ ծեր Գաս
» տոնին տղան է, որ Տուպինի նաւահան
» գըստին մէջ իրեն կեանքը քեզի համար զոհ
» ըրաւ » : — « Տէր Աստուած, ըսաւ Վամ
» պեր, Նդուարդին հետ սլադտուելով .

» Ի՛նչ կ'ըսես, դու ան Գաստոնին զաւանին
» ես որ ինծի համար կեանքը դրաւ : Անանկ
» է նէ ասկէ ետքը զքեզ աւելի պիտի սի-
» ընմ, ու հօր պէս վրադ հոգ պիտի ու-
» նենամ. պատերազմին մէջ ալ միշտ քու
» պիտի կեցընեմ զքեզ. իմ վրանս ալ քու
» կլինդ է, և թէ որ բանի մը կարօտ
» ըլլաս եկու համարձակ ինծի ըսէ » :
Ադուարդին սիրտը ելաւ ու սկսաւ լալ, ի-
մանալով որ այնպիսի մարդու մը ծառայու-
թեան մէջ պիտի մտնէ որուն համար իր
հայրը կեանքը զոհ ըրեր էր : Ախբթոնն զօ-
րապետը շուտ մը սկսաւ երթալու պատրաս-
տութիւնները տեսնել : Ադուարդը աղաչեց
Ախբթոնին որ հետը տանի իր նամակն ու
քիչ մը ստակը՝ որ մօրը համար ժողովեր էր,
և ինչուան բանակը անոր հետ երթալէն ետ-
քը՝ վերջի բարեւը տալով դարձաւ իրեն
նոր զօրապետին քուլը :

Անդին խեղճ Ասթերը օրէ օր իրեն տը-
ղուն Աւոնին դառնալուն կը սպասէր. շատ
սպասելէն ետքը երբոր չեկաւ, « Անշուշտ
» Ադուարդս մեռած է, ըսաւ, անոր հա-
» մար Աւոնը սիրտ չընեւ աս լուրը ինծի
» բերելու » : Այրդ ուհին ալ ըսելով տըրտ-

մութք պաշարուեցաւ : « Վ ախեմ թէ ըն-
» կերոջդ պիտուն ալ փորձանք մը եկած
» ըլլայ , տղջիկս , կ'ըսէր Աստերը : —
» Աս ալ ատկէ կը վախնամ մարիկ . չէ
» նէ ինչուան հիմա պէտք էր որ դառնար » ,
ըսաւ Վ արդուհին , ու երկուքն ալ բոլոր
օրերնին ասանկ տխուր բաներ մտմտալով
կ'անցընէին :

Ադուարդին արածած ոչխարները փո-
խադրական հիւանդութենէ մը զարնուեցան ,
Վ և ոնին մշակած արտերը ուրիշ անգամնե-
րուն կէսը հազիւ կը բերէին : Պատի պար-
տէպին ծառերը երեսի վրայ մնալով , գրեթէ
ամենեկին պտուղ չտուին . վայրի կենդանի-
ներն ալ շատնալով գիշերները ինչուան պար-
տէզը կուգային ու կ'աւրըշտրկէին : Պար-
նան ատեն շատ անգամ լիճը իր թումբերը
պատուելով արտերը ջուր կը կոխէր : « Թէ
» որ զակրներս հոս ըլլային նէ , կ'ըսէր
» Աստերը , աս բաներս չէին ըլլար . բայց
» պէտք է Աստուծոյ զրկած խաչը՝ համ-
» բերութեամբ տանինք իրեն սիրոյն հա-
» մար » : Աս իշտերուս մէջ ալ Աստեր չէր
յուսահատեր . հասկա անդադար աղօթքով
Աստուծոյ օգնութեանը կը սպասէր : « Աս

» տուած մեր խեղճութիւն կը տեսնէ, կ'ըսէր
» Վարդուհիին, և կ'ուզէ զմեզ փորձել, որ
» քիչ ատենէն ցուցնէ մեզի իրեն ողորմու-
» թիւր և մեզի օգնէ: Ը՛հ ողորմած Ը՛ծ,
» յոյսս քու վառ է. դու եւ մեր հայրը, և
» գիտեմ որ քու զաւկրներդ ձեռքէ չես
» թողուր: Դու էիր քու Յոր ծառայիդ
» համբերութի տուողը, դու զինքը քիչ մը
» չարչարելէդ ետքը՝ նորէն իր առջի հարրա-
» տութեւր մէջ հաստատեցիր: Ա՛յլ գիտէ
» թէ մեզի ալ այսպէս պիտի չընես, ու մեր
» տրամութիւն ուրախութի պիտի չփոխուի:
» Թէ որ զաւկրներս կորսունայրնեմ՝ դուն
» գոնէ ողորմած մարդ մը դիպէ՝ որ մեռ-
» նինք նէ աչքերնիս գոցէ »:



ԳՆՈՒԽ Ր

Մարդուս երջանկութեան սլափառը
իր բարի վարքն է :

Վճբաղղ Վ Լոնին նաւը յաջող հով մը
գտնելով՝ երջանկութեամբ հասաւ Պրիս-
թոլ քաղաքը . հոնկէ՛ նաւաւարները ոտքով
ինչուան Վ ղնտրա գնացին , Վ Լոնն ալ նա-
ւաւարներու խումբի մը մէջ գրին՝ որ թա-
միզ գետին եզերքը կ'աշխատէին : Ըմէն ա-
ռաւօտ մութն 'ի մութը կ'երթար գետին
քովը , և օրն 'ի բուն արիւն քրտինք մտնե-
լէն ետքը՝ հազիւ թէ սև հաց ու քիչ
մը աղած ձուկ ու գաւաթ մը գարեջուր
կուտային իրեն : Շատ անգամ կը յիշէր
ան երջանիկ օրերն որ Իրլանտայի տնակին
մէջ անցուցեր էր , և ան աղատութիւն ու ան
զուարթութիւն որ ամենուն երեսին վրայ կը
տեսնէր՝ երբոր իրիկունները որսը կ'ոնակը
շարկած սուն կը դառնար : Աշտիմէին սի-
րոյ նշանները , ընկերոջը և մօրը իր վրայ

ունեցած սէրը միտքը բերելով՝ կը տեսնէր որ իրեն հիմակուան կեանքին բողբոլովն հակառակն էին առջի անյուշացած երջանիկ օրերը: Մէկը չկար որ բարեկամութե խօսք մը ըսէր իրեն . հասլա զգուելի կատակներ , դարշելի հայհոյանքներ ու սուտ երգմունքներ ալ կանջները կը խցրնէին . մեծերուն հրամանը թէ որ յանկարծ չկատարէր , գերիի պէս կը պատժուէր . շատ անգամ ալ անոնց համար արիւն քրտինք մտնելով կ'աշխատէր , բայց ամենեկին իր վիճակէն չէր դանդաւտեր : « Արժանի եմ բոլոր աս բաներ »
» բուս , կ'ըսէր ինքնիրեն , որովհետեւ հօրս
» տանը մէջ իմ երջանակութիւնս չճանչ
» ցայ : Ան ատեն ամէնքը իմ վիճակիս
» կը փափաքէին , հիմա ողորմելի մարդ մը
» եղեր եմ : Ա՛հ , ինչո՞ւ աս բաներս առա
» ջուց չմտածեցի , քանի որ դեռ ժամա
» նակ ունէի , որ հիմա ալ այսպէս չէի
» տրտմեր դառն արսորանքիս մէջը : Ա՛հ ,
» ի՞նչ կ'ընէ արդեօք հիմա մայրս Իրլան
» տայի մէջ , ի՞նչ կ'ընեն ընկերս ու Ալփի
» մէն : Խեղճերը կարելի է թէ թշուա
» ռութեան մէջ իյնալով յուսահատեր են :
» Ո՞վ պիտի հոգայ հիմա մեր արտերն ու

» ոչխարները . ո՞վ պիտի երթայ որսի և
» ձուկ բռնելու » : Ասոնք մտածելով կը
հալէր ու կը մաշէր :

Տօնի օր մը Վեոն բան գործ չունենալով՝ գլուխը քաշեց ու Վոնտրայէն քիչ մը հեռու տեղ մը գնաց . երբոր մինակ կը պլտրտէր , տեսաւ որ պարտեզի մը դռնէն անոյշ կերպարանքով ծեր մարդ մը դուրս կ'ելլէր՝ ձեռքը գիրք մը բռնած : Աս մարդը Վեոնին քովը եկաւ՝ ու անոր աչուրնեբուն ուռեցքէն իմացաւ որ խեղճ մարդ մըն է . քաղցրութեամբ բարև տալէն ետքը՝ հանեց քսակն ու քանի մը ստակ տուաւ անոր : Վեոն շնորհակալ ըլլալով տուած ողորմութեանը , իմացուց անոր որ մխիթարութեան կարօտ է՝ չէ թէ ստակի : Ան ատեն ծերը աւելի ուշադրութեամբ ասոր երեսը նայելով հարցուց թէ իրլանտացի է : — « Հրա »
» մեր ես , իրլանտացի եմ » ըսաւ Վեոնը : —
« Ինչո՞ւ ատանկ տրտմեր ես , մայրդ մեռաւ ,
» ի՞նչ եղաւ » : — « Ա՛հ , կրնայ ըլլալ որ
» ինչուան հիմա մեռած ալ ըլլան . խեղճն
» բուն մէկ հատիկ օգնականը ես էի , իմ
» գէշ վարքովս փորձանքներու մէջ ձգե
» ցի զերենք : Աս գժբաղդութիւնը Աս

» տուած տուաւ ինծի, որ բրածներուս ա,
» պաշխարանք ըլլայ » : — « Այլու սա
» պարտէզը երթանք, ըսաւ ծերը, կարելի է
» կրնամ զքեզ մխիթարել : Այս ալ քահա,
» նայ մարդ եմ » : — « Ի՞նչ, ըսաւ Աւոնը
» անոր խօսքը կտրելով, քահանայ ես .
» բայց գիտնաս որ ես ուղղափառ եմ,
» և աս է իմ մէկ հատիկ մխիթարութիւնս .
» աս աշխարհիս մէջ թշուառ եմ՝ նէ՛ գոնէ
» անդին ալ թշուառ չըլլամ » : — « Ո՛վ
» զաւակս, ըսաւ քահանան՝ Աւոնին ճի-
» տը պըլուելով, ես ալ ուղղափառ քա-
» հանայ եմ . կը տեսնես կուրծքիս վրայ կա-
» խուած սուրբ Աստուածածնայ պընձէ
» պատկերքը » , ըսաւ, ու բանալով ցցուց
անոր Աճածնայ աղուոր միտաշն ու ջերմե-
ռանդութիւն պագաւ, Աւոնին ալ պագցուց :
Պարտէզին չորս կողմը բարձր պատ-
մը քաշուած էր՝ որուն ներսի կողմը նկա-
րուած էին հին ու նոր կտակարանին
սրատմութիւնները . ան պատկերներուն
մէջ ամենէն աւելի Աւոնին աչքին զարկաւ
մէյմը Յիսուսի արքայութեան բանկիքները
Պետրոս առաքեալին յանձնելը, մէյմըն
ալ Աստուածածնայ վերափոխումը, և սուրբ

() գոստինոսին Անգղիա հասնիլը որ Վան-
թորպէրիին առջի եպիսկոպոսն էր և անգ-
ղիացւոց ազգին լուսաւորիչը : Վահանան
տարաւ զինքը շէնքի մը դիմաց , որ դրսէն
շատ պարզ էր . դուռն որ բացաւ , տեսնէ որ
ներսի կողմը ուղղափառի մատուռ մըն էր ,
մէջը խորան մը վրան փայտէ փորուած
տասարանակով կանթեղները , սուրբերու
արձանները բոլորն ալ փայտէ փորուած .
խոստովանանք ըլլալու տեղ մըն ալ կար .
ասոնք էին ան աղուոր մատուռին զարդե-
րը : Վահանան ու Վեոնը ծունկի վրայ ե-
կան խորանին աստիճաններուն վրայ , և
երկուքն ալ ջերմեռանդութեամբ կարճ ա-
ղօթք մը ընելէն ետքը դուրս ելան : Վեոն
շատ շնորհակալ եղաւ քահանային՝ որ զինքը
այնպիսի սուրբ տեղ բերեր էր : « Աս , ըսաւ ,
» քաղքէն դուրս ուրիշ բանի համար չէի
» ելած , բայց եթէ իմ խեղճութիւնս մտա-
» ծելու . հիմա փնտուածս գտայ , այսինքն
» եկեղեցի մը և ուղղափառ քահանայ մը :
» Հիմա իմացայ որ Աստուած իմ խնդիրքս
» կը լսէ եղեր , աղօթքի համն ալ հիմա
» առի . ասկէ ետքը կը յուսամ որ Աս-
» տուած կ'սղորմի իմ խեղճ մօրս , ընկերո-

» ջրս ու զաւկիս , և զիս ալ օր մը արժա ,
» նի կընէ զերենք տեսնելու » : — « Փանօք
» Աստուծոյ , ըսաւ քահանան , որ ողորմե ,
» ցաւ քեզի . դժար բան է աս մեծ քաղ ,
» քիս մէջ բարի մարդիկ գտնելը . 'ի հարկէ
» գիտես Անգղիայի խիստ օրէնքը որ Անն
» տրայի մէջ ուղղափառի եկեղեցի շինելու
» հրաման չկայ . ասոր համար ես ալ իմ
» պարտեզիս մէջ աս մատուռը շինել տուի՝
» որ ան մէկ քանի ուղղափառներն որ
» կան՝ կիրակի ու տօն օրերը հոս դան ու
» պատարագ մը տեսնեն : Աւրիշ քահա
» նաներ ալ կան՝ որոնցմէ ոմանք քարոզ
» կուտան , ոմանք ալ խոստովանանք կը
» լսեն : Այլ ուղղափառ ծերուկ մըն ալ
» կայ որ աս պարտեզիս հոգ կը տանի :
» Քեզի հիմկուհիմա աս միայն կը յան
» ճնեմ որ այսօր ինչ որ տեսար ու լսեցիր՝
» մարդու չզրուցես . վասն զի տէրութիւնը
» լսածին պէս՝ հալածանքը աւելի կը սաստ
» կացընէ » : Աւոն խօսք տուաւ որ առ
» ջնի կիրակին նորէն գայ , ու ելաւ գնաց ,
» շնորհակալ ըլլալով Աստուծոյ որ իրեն աս
» մխիթարութիւնս տուաւ :

Ան օրէն ետքը Աւոն բողորովին Աստու

ծոյ ապաւինած՝ մեծ համբերութեամբ իրեն
խաչը կը տանէր : Ամէն կիրակի մատուռը
կերթար ու սլատարագ կը տեսնէր . ամէն
ամիս խոստովանանք կ'ըլլար , և ջերմն-
անդութեամբ սրբութիւն կ'առնէր , և
ամէն ըսած խրատները կը ջանար գործքով
կատարելու . թէ որ ան ատեն մէկը տեսնէր
անոր բարեպաշտութիւնն ու խոնարհութիւր ,
ամենեւին հաւտալը չէր գար թէ աս ան
Վեոնն է : Այս որպէս զի նորէն մեղքերու
մէջ չլինայ՝ բոլորովին քաշուեցաւ ան խառ-
նափնդոր ընկերութիւններէն՝ որ բոլոր իրեն
թշուառութեանը սլատճառ եղեր էին : Այս-
կերները շատ անգամ զինքը ծաղը կ'ընէին
ու կ'ըսէին . « Տեսէք ինչպէս ջերմնանդ
է Վեոնը , ոչ խաղալ կը սիրէ , ոչ խնտալ .
ճգնաւոր դարձեր է » : Վսկ անիկայ ամե-
նեւին ականջ չէր կախեր ան կատակնե-
րուն , և միշտ կը ջանար անանկ ատեններ
բարկութիւնը բռնելու , միտքը բերելով ի-
րեն դժբաղդութիւնները՝ որ բարկանալէն
առաջ եկեր էին : Աիրակի ու տօն օրեր
սլատարագը սեսնելէն ետքը երբոր կ'ու-
զէր քիչ մը զուարճանալ՝ կ'ելէր թմամիզ
գետին եղերքը ժուռ գալով իր ընտանեացը

վրայ կը մտածէր, ու սիրտը բացուելով յոյժ
կ'առնէր մէկ օր մը նորէն զանոնք տես-
նելու :

Շատ անգամ իրեն եղբօրը համար առ
մէկուն մէկալին կը հարցունէր, բայց իր
զխտցածէն 'ի զատ նոր բան մը չէր լսեր :



ԳՒ ՈՒՒՍ Թ

Ուրախալի լուր մը :

Երբանտայի խրճիթը կարծես թէ Աստուծոյ ու մարդկանց երեսէն ընկեր էր : Ասթեր առանց գաւազանի չէր կրնար սրկէ հոն երթալ . Սարգուհին ալ մտմտութեն օրերով անկողին ընկաւ . իսկ Աւփիմէն իր մայրն ու մամը հողալու համար անդադար կ'աշխատէր , ու անանկով ալ խեղճը ամէն բանի չէր կրնար հասնիլ : Այսպէսով իրենց օրերը արտամութեամբ կ'անցընէին . ինչ պաշար (զահրէ) որ ունէին՝ լմրնալու վրայ էր , Ասթերին պահծու ստակէն ալ հազիւ թէ քանի մը փող մնացեր էր :

Մէկ առաւօտ մը Աւփիմէն կանուխ մօրը անկողնին քովը գնաց՝ որ հարցընէ թէ գիշերը ինչպէս անցուցեր էր : « Ինչո՞ւ ե՞լար Աւփիմէ , ըսաւ մայրը . ինչ բանի համար այսչափ կանուխ ելեր ես անկող-

» նէդ » : — « Նայէ մարիկ, ըսաւ աղ-
» ջիկը , նայէ ինչպէս արևուն ճառա-
» գայթները գիմացի լեռանը վրայ զար-
» կեր են . հայրս ինծի ըսեր էր թէ ա-
» սիկայ աղէկ օրուան նշան է » : — « Մեր
» էր թէ այնպէս բան մը ըլլար , ըսաւ մայ-
» ըր . մենք ինչուան հիմա նեղութեան
» համբերեցինք , ասկէ ետքը Աստուած
» կամենայ նէ՛ երջանիկ օրեր ալ կը տես-
» նենք : Գնա՛ զաւակս , հագուէ ու վեր-
» ջը եկու որ մէկտեղ աղօթքնիս ընենք ,
» որպէս զի Աստուած մեզի ողորմի » :
Ասիիմէն գնաց հագուեցաւ , ետքը եկաւ
ջերմեռանդութեամբ իր աղօթքներն ըրաւ .
աղօթքը լմնցընելէն ետե սենեակը աւելց
շտկրտեց , ամէն բան տեղաւորեց , ետքը
գնաց մօրը հարցուց թէ ուրիշ ինչ բան կայ
ընելու : « Քեզ տեսնեմ , ըսաւ մայրը , կու-
» ժր առ ու գնա՛ գետէն սպաղ ջուր մը
բեր . բայց նայէ որ միջը չիյնաս » : Ասիի-
մէն առաւ կուժն ու գնաց :

Մայիս ամսուն աղուոր առաւօտներէն
մէկը ըլլալով ծառերը նոր ծլած կանաչ-
ցած էին . թռչնիկները իրենց անոյշ երգե-
րովը արշալոյսը կը բարևէին . կապուտ ձեր-

մակ մանր ծաղկրներէն անուշ հոտ մը կը
բուրէր, դաշտին երեսը ցրուած տեսակ տե-
սակ ծաղկրներուն գոյները մարդուս աչքը
կ'առնէին, վրանին իջած առաւօտեան ցո-
ղին կաթիլներն ալ արևուն ճառագայթնե-
րէն մարգրտի պէս կը փարփէին : Աւփի-
մէն աս գեղեցկութիւնները տեսնելով կը
զմայլէր . « Աս ի՛նչ աղուոր թռչուններ են ,
» կ'ըսէր ինքնիրեն , աս ի՛նչ սիրուն ծաղկր-
» ներ են որ մարդուս սիրտը ուրախութիւ
» կը լեցընեն . մեղք որ միայն մեր խեղճ՝
» տնակը տրտմութեան մէջ թաղուած կե-
» ցեր է : Ա՛յ ողորմած Աստուած , դուն
» որ անշունչ արարածներուդ կեանքը կը
» պահես , մեզի ալ ողորմէ՛ , առողջութիւն
» տուր մօրս , մխիթարէ մեծ մայրս , որ մը
» առաջ դարձու բեր իմ հայրս , և շնորհք
» տուր մեզի որ բոլոր սրտանց զբեղ սիրենք » :

Աւփիմէն այսպէս սրտանց հառաչանք-
ներ ըրած ատենը՝ մէյմըն ալ տերևներու
խշորտոց մը լսեց . դարձաւ նայեցաւ , աղ-
ջիկ մը տեսաւ որ կ'ըսէր իրեն . « Խեղճ՝
» տղայ , կարծեմ թէ վախցուցի զքեզ . մի
» վախնար . ես լսեցի քու աղօթք ընելդ .
» ո՞վ ես դուն , տունդ ո՞ւր է » : Աւփի-

մէն աս խօսքերէս սիրտ առնելով, « Իմ
» անունս Աւփիմէ է, ըսաւ, Իրլանտայի
» տնակը կը նստինք, շատ դժբաղդութե
» մէջ ենք . հայրս ու հօրեղբայրս չեմ գի-
» տեր ո՞ւր գացին . մայրս հիւանդ, մամս
» ալ հալորած, տունը ինծմէ զատ մարդ
» չկայ որ անոնց համար աշխատի » : —
« Օ իս ձեր տունը կը տանիս, ըսաւ աղ-
» ջիկը . ես մօրդ հետ խօսիմ, կարելի է նէ
» ձեզի ծառայութի մը ընեմ » : — « Ինչ
» չո՞ւ չէ, ըսաւ Աւփիմէն . բայց նախ եր-
» թամ սափորս լեցընեմ ու գամ » : —
« Տուր ինծի սափորդ՝ ես կը լեցընեմ »
ըսաւ, առաւ սափորը գնաց լեցուց, ու
Աւփիմէին հետ գնացին ինչուան խրճիթը :
« Երբ մտածին պէս տեսաւ որ Աստեր տըր-
տում տխուր Ա արդուհին անկողնին քո-
վը նստեր է . բարև տուաւ, նստաւ անոնց
քով, իրենց ալ իմացուց իր միտքը : « Դուն
» ո՞վ ես որդեակ, ըսաւ Աստեր » : — « Չե
» զի պէս դժբաղդին մէկն ալ ես եմ, ըսաւ
» Մարիամը : Արկու տարի կայ որ ծնրդքս
» մեռան, հօրեղբայրս զիս իր քովը առաւ
» որ իր ոչխարները արածեմ . չեմ գիտեր
» ինչպէս եղաւ որ աս օրերս մէկ ոչխար մը

» կորսուեցաւ , անոր համար հօրեղբայրս
» ալ զիս քովէն վճռնտեց : Բոլոր գիշերը
» անտառին մէջ անցուցի , աս առաւօտ Աշու-
» փիմէին աղօթք ընելը ըսելով միտքս զրի
» որ դամ ձեր քովը աշխատիմ » : Աստեղը
քիչ մը ատեն մտածեց թէ ի՞նչ ընէ . ետքը
Մարիամին ձեռքէն բռնելով ըսաւ . « Աս-
» տուած զրկեց զքեզ , սիրելի զաւակս , կրո-
» նաս մեր քովը կենալ . իրաւընէ թէպէտ
» մենք ալ շատ աղքատ ենք , բայց Աս-
» տուած մեզի կ'օգնէ . երեսի վրայ մնա-
» ցած որք մը պարտրկելը Աստուծոյ հաճոյ
» գործք մըն է : Հոս մեր քովը կեցիր , քե-
» զի ամենեւին բան չպակսիր » :

Մարիամը շուտ մը սկսաւ իր գործու-
նէութիւնը ցուցնել . առաջ սկսաւ հի-
ւանդները հոգալ , քանի մը տեսակ խոտեր
խաշելով՝ Վարդուհին խըմցուց . անով խեղ-
ճը քիչ մը աչքը բացաւ , և քանի մը օրուան
մէջ յայտնի տեսնուեցաւ Աստուծոյ նախա-
խնամութիւնը ան տանը վրայ : Վարդու-
հին կամաց կամաց վրայ եկաւ , ու տասնը-
հինգ օրէն բոլորովին առողջանալով՝ Մա-
րիամին հետ սկսան արտերը մշակել , ողջ
մնացած կուլերուն ու ոչխարներուն վրայ

հոգ տանիլ, պանիր շինել ու ծախել . այս պէսով կամաց կամաց նորէն ամէն բան տեղաւորեցին ու կարգի դրին : Վարիամը թռչուններու ցանց շինելուն կերպը գիտնալով քանի մը հատ շինեց , անով շատ մը թռչուն կը բռնէր , կէսը կերակուրի կը գործածէին , կէսն ալ մօտ եղած գեղերը կը տանէին ու կը ծախէին :

Ասթեր տեսնելով Վարիամին աշխատութեամբը առաջ եկած յաջողութիւնները , շատ անգամ արցունքով լեցուած աչուրները երկինք կը վերցընէր ու շնորհակալ կ'ըլլար Աստուծոյ՝ որ այնպիսի օգնական մը զրկեց իրենց : « Զեմ գիտեր ինչ բանի համար աս » շնորհքիս արժանի եղայ , կ'ըսէր ինքն . » իրեն . ան աղջկան հետ Աստուծոյ օրհնութիւնն ալ մեր սնակը մտաւ : Ի՞նչ » կերպով պիտի կարենամ երախտագէտ » ըլլալ իրեն մեզի համար ըրածներուն , » իրեն ծառայութեանցը ինչպէս հատուց » մունք պիտի ընեմ : Ա՛հ , Ադուարդս » ողջ ըլլար , ու օր մը առաջ գար նէ... »

Անձրևոտ օր մը Վարիամը նստաւ՝ ուռկան մը հիւսեց , որ լճին մէջ կը ձգէր ու քիչ ատենուան մէջ շատ ձուկ կը բռնէր . ու

րիշ անդամ՝ Ադուարդն ալ բրեր էր նոյն բա-
նը, բայց ասոր շինածը տարբեր էր. բռնած
ձուկերէն մէկ քանին կ'աղէր, մնացածն
ալ կ'եփէին ու կ'ուտէին: Ասթեր տեսնելով
որ Մարիամին շինած ցանցովը շատ ձուկ
կը բռնուի, օր մը ըսաւ անոր. « Մտքէս
» կ'անցնի որ աս ձկները կրնաք Պրէյ քա-
» ղաքը տանիլ ու ծախել, անկէ եկած ստա-
» կովը մէկ քանի հարկաւոր բաներ գը-
» նել »: — « Թէ որ ինծի հրաման տաս
» նէ, ըսաւ Մարիամը, վաղը չէ մէկալ օր
» երթամ՝ մէյմը աս բանս փորձեմ. թէ
» որ աւելի օգուտ է նէ՝ առաջ տանինք
» ատ բանը »: Ասթեր քաղաքը երթալու
խօսքը լսելուն պէս խռովեցաւ. վասն զի
մէկէն միտքը ընկաւ իր սիրելի զաւակը, որ
քաղաք երթալով մէյմըն ալ ետ չգարձաւ.
Մարիամին ալ բան մը հանդիպի նէ՝ ես ի՞նչ
ալիտի ընեմ կ'ըսէր. բայց վերջը յոյսը
Աստուծոյ վր դնելով հաւանեցաւ: Մա-
րիամը շատ մը ձկներ ու թռչուններ առաւ,
եւաւ քաղաքը գնաց: Ասթերը կրկին կրկին
ասլըսալրեց իրեն որ շատ չուշանայ, շուտով
դառնայ, իր կողմանէ ալ բարեւ տանի ան
վաճառականին՝ որուն ձեռքովը ատեն մը

Նդուարդը ամէն ամիս ստակները կը ղըր կէր իրեն :

Իրիկուան դէմ՝ Մարիամը ուրախութի լեցուած տուն դարձաւ : « Շատ ուրախաւ » լի լուրեր բերի ձեզի , ըսաւ . մեզի հարկաւոր եղածներէն ալ քանի մը բան գնեցի : Չկները , թուշուններն ու կարագը աղէկ գնով առնող առնողի եղան ... Նդուարդէն ալ թուղթ մը կայ » : — « Ի՞նչ կ'ըսես , կանչեց Նսթեր , դեռ զաւակս ո՞ղջ է . փանօք քեզ Մտտուած : Վարդուհի , բաց կարդա նայինք սա թուղթը » : Վարդուհին թուղթը բացաւ , Մարիամն ալ սեղանին վրայ ստակով լեցուն քսակ մը դրաւ . խկ Նսթեր ստրկին վրայ ալ չնայեցաւ , խեղքը միտքը Նդուարդէն եկած նամակին վրան էր . Վարդուհին ալ բարձր ձայնով սկսաւ կարդալ .

Սիրելի մայր իմ ,

« Ես նամակս կը գրեմ հրամանքիդ » Ստանկայէն . մեր բանակը հիմա Սարակոսա քաղաքին քովերն է : Շատ կը փափաքէի որ հուպինէն ելելու ա-

» տենս ձեզի թուղթ մը գրեմ, բայց շու
» տով ճամբայ ելելուս համար չկրցայ: Իմ
» առջի զօրապետս որ Աիբթոն կ'ըսուէր՝
» հրաժարեցաւ, թողուց բանակը Լոն
» տրա գնաց. ես ալ ջանացի անոր հետ
» աս նամակս ու քիչ մը ստակ ձեզի զրկե
» լու: Հիմակուան իմ զօրապետս Լամ
» պէր կ'ըսուի. ասիկայ ան զօրապետն
» է որուն կեանքը անգամ մը առաքինի
» հայրս ազատեր էր Տուսլինի նաւահան
» գըստին մէջ: Ես զօրապետը իմ վրաս
» մեծ սէր ու հոգ ունի, այնպէս որ ձե
» զի զրկելու վեց լիւրէ սթերլինիս վրայ տաս
» նըչորս լիւրէ սթերլին ալ իր կողմանէ ա
» լեցուց. ուստի հիմա բոլորը մէկէն քսան
» լիւրէ սթերլին պիտի առնէք Պրէյքադքին
» վաճառականէն: Իմ բաժնուէլէս ետքը
» ձեզի համար շատ արցունք թափեցի. գի
» շեր ցորեկ խեղքս միտքս ձեր վրայ է: Հաս
» անգամ Եստուծոյ աղօթք կ'ընեմ որ ձե
» զի երկայն կեանք տայ, որպէս զի նորէն
» գամ ու զձեզ ողջ առողջ տեսնեմ: Օխ
» որ հարցընէք, փառք Եստուծոյ, ողջ
» առողջ եմ. թէպէտ շատ անգամ տեսայ
» ընկերներուս մեռնիլը, բայց Եստուած

» ինչուան հիմն իմ կեանքս պահեց , և կը
» յուսամ որ ձեր աղօթքովը ինչուան ետքն
» ալ կը պահէ : Ամէն գլխաւորներս վրաս
» դուժ ունին , ընկերներս ալ շատ սիրով կը
» վարուին հետս : Աս իմ դառն կեանքիս մէջ
» մէկ հատիկ մխիթարանքս ան է՝ որ եղ-
» բայրս ազատեցի , ինքը ինձմէ աւելի կըր-
» նայ ձեզի օգնել , պատերազմի մէջ մեռ-
» նիմ նէ ալ հանգիստ սրտով կը մեռնիմ ,
» ըսելով թէ եղբայրս ձեր վրայ հոգ կը
» տանի » :

Արք աս կտորը կարդաց՝ Վարդուհիին
սիրար ելաւ , աչուրները լեցուեցան , կարդա-
լը առաջ չկրցաւ տանիլ . Ասթերին աչուրնե-
րէն ալ աղբիւրի պէս արցունք կը վազէր . . .
Քանի մը վայրկեան այսպէս կենալէն ետ-
քը , Վարդուհին նորէն սկսաւ նամակը
կարդալ . « Աստուծով կը յուսամ որ եթէ
» դառնամ իմ հայրենիքս , գձեղ ամէնքդ
» ալ երջանիկ ու ողջ առողջ կը գտնեմ . ան
» ատեն պիտի ըսեմ իմ եղբորս . Ապրիս
» Վ Լոն , իրաւ ես քու տեղդ պատերազմե-
» ցայ , բայց դուն ալ կտորձութեամբ աշ-
» խատեր ես մայրերնիս աղէկ հոգալու հա-
» մար : Աս որչափ կարելի է կը ջանամ

» որ շուտով ազատութեանս հրամանը
» առնեմ, ու ժամ մը առաջ ձեր քովը
» դառնամ: Հիմկուհիմա ընդունէ մա-
» ըիկ, իմ բարես. իմ կողմանէս ալ շատ
» շատ բարե ըրէ սիրելի եղբօրս, մեր հարսին
» Վարդուհիին ու սղտի Աւփիմէին՝ որ
» կարծեմ թէ հիմա մեծցած պիտի ըլլայ:
» Արօտով կը փափաքիմ. քու օրհնութեդ,
» և կը մնամ,

Հարազատ որդիդ Եղուարդ:

Ա՛յ նամակս ամենուն սրտին մեծ ուրա-
խութի եղաւ: Ասթեր ձեռքը առաւ ու մա-
սունքի պէս կը սլաղնէր իր սիրելի զակկին
բարեազիրը. կարծես թէ ամէն ցաւերը
մոռցաւ՝ երբոր ըսեց իր սիրելի Աղուարդին
ողջ առողջ ըլլալը: Ա՛յի բերան Աղուարդին
ղրկած ստրկին վրայ ուշադրութիւն չէր
ըրած. բայց երբոր Մարիամը քսակը ձեռ-
քը տուաւ, Ասթեր աշուրները դէպ'ի եր-
կինք վերցուց ու կանչեց. « Տեսէ՛ք սա
» տղուն բարեսրտութիւնը. իր բերնին հա-
» ցը կը կտրէ, որ մայրը թշուառութենէ
» ազատէ. այսպիսի զաւակ ո՛ր տեսնուած

- » է : Արչափ մարդիկ կան որ իրենց եկա-
» մուտէն աւելի ծախք կ'ընեն . ասիկայ իր
» մօրմէն զատ ուրիշ բան չհողար : Ա՛հ ,
» ե՛րբ պիտի տեսնեմ սիրուն զաւակս . ան-
» տարակոյս պիտի տայ ինձի Աստուած
» աս շնորհքս . յուսամ որ սուրբ Աստուա-
» ծամօրը խնամքը վրան կ'ըլայ . թէպէտ
» և ինքը իր աղէկութեամբը իմ աղօթքիս
» ալ կարօտ չէ » :

Այսպէս ան դառն փորձանքներէն ետքը
որ աս խեղճերը երկայն ատեն սիրով քաշե-
ցին, Աստուած իր ողորմութե դուռը բացաւ,
ու գլխած աչքուը նայեցաւ անոնց վրայ :
Աղուարդին զըկած ստակուը իրենց վերջի
աղքատութէն ազատեցան : Արդուհին
տեսնելով որ ակոռին մէջը տեղ ունին , մէկ
կով մը ու վեց ոչխար ալ գնեց . շատ մը
հաւ առաւ , որպէս զի ծախելու վառեակ
ու հաւկիթ շատ ունենան : 'Աոր ուռկան
մին ալ շինեց ու ընին մէկ ուրիշ կողմը
դրաւ , որով գրեթէ ամէն օր առատ ձուկ
կը բռնուէր : Արդուհին ու Մարիամը ա-
մէն շաբաթ Արէյ քաղքին վաճառանոցը
կ'երթային , և ամէն անգամ աղէկ ստրկու-
կը ծախէին իրենց տարած բաները :

Ասթերն ու Վարդուհին Մարիամը
այնպէս կը սիրէին՝ որ իրենց զաւկին պէս կը
նայէին անոր վրայ : Վարդալն ու գրեւը ինքը
սորվեցուց Ասիիմէին . ան ալ այնպէս շու-
տով ու աղէկ կը սորվէր որ ամէնքը կը զար-
մանային . այնպէս ալ քաղցր բնութիւն մը
ունէր որ իրեն մամունն ու մօրը ցաւերը կ'ա-
նուշորնէր , և իրեն ծնողացը առաքինու-
թիւններէն բարի օրինակ առնելով՝ անոնց
նմանելու կը ջանար :



ԳՒ ՈՒՒՍ Ժ

Հաւատարմութեան ազուոր օրինակ մը :

Վեռնը պատուական քահանաներու ձեռքին տակը բարեպաշտութեան ճամբուն մէջ օրէ օր առաջ երթալու վրայ էր , անանկ որ բողորովին նոր մարդ դարձաւ , ու կարծես թէ առջի Վեռնը չէր : Մնկերները տեսնելով որ անիկայ իրենց անհամ կատակներուն ամենեւին ականջ չէր կախեր , ալ դադրեցան զինքը ծաղր ընելէն . մանաւանդ որ իշխաններն ալ տեսնելով անոր բարի վարքը , զինքը թափախելով քովերը աշխատող ամէն նաւաւարներուն վրայ վերակացու դրեր էին . իրեն հետ աւելի քաղցրութեամբ կը վարուէին , ու շատ անգամ աւելի մեծ պաշտօններն ալ իրեն կը յանձնէին :

(Օր մը վաճառականի նաւ մը հասաւ , մէջը շատ սուղ ապրանքներով ու արևելեան Հնդկաստանի վաճառքներով : Սաւալար ,

ներուն հրամանն ելաւ որ ան նաւուն ապ-
րանքները դուրս հանեն . Վ Լոն անոնց հետ
քանի մը որ աշխատելով նաւը պարպեցին ,
այնպէս որ քանի մը անշահ նիւթերէն զատ
բան չմնաց մէջը : Վ Լոնը երբոր անոնք ալ
ժողվեալեղու հետ էր , մէյմըն ալ նաւուն մէկ
անկիւնը յարդերուն տակը պահարան մը
տեսաւ , քացաւ նայեցաւ որ հարիւր հա-
զար ֆրանքնոց դրամաթղթէն աւելի կար
մէջը : Աս բանիս վրայ զարմացած՝ պահա-
րանը ծոցը դրաւ , շուտ մը նաւահանգրս-
տին գլխաւորին գնաց : Ասիկայ առաջ գոր-
ծաւորներուն վարձքը տալու հետ ըլլալով
Վ Լոնին ուշ չգրաւ . վերջը հարցուց անոր
թէ « Ի՞նչ վճուղես » : — « Վաւուն տէ-
» ըր կը փնտոնեմ ըսաւ Վ Լոն , խօսք մը ու-
» նիմ իրեն զուրցելու » : Գլխաւորը անոր
միտքը չիմանալով շեխելով ըսաւ իրեն
թէ « Ի՞նչ բան ունիս անոր հետ . ի՞նչ , կը
վախնաս որ քու աւուրչէքդ չըտար » : —
« Պարոն , գիտցիր որես հասկըցած մարդդ
» չեմ , ըսաւ Վ Լոն . ես մէկ քանի ստակ առ-
» նելու համար չեմ եկած , հասլա իմ քրիս-
» տոնեական պարտքս վճարելու համար » .
աս ըսելով հանեց ծոցէն պահարանը և ցցուց

անոր : Մարդը աս խօսքերս լսելով ասըն-
ցաւ մնաց . պահարանը ձեռք առաւ ու բա-
ցաւ , և Վեոնին անմեղութիւն տեսնելով թո-
ղութիւն ուզեց իրմէ . « Ղու արդար մարդ
» ես եղեր , ըսաւ անոր , կը ցաւիմ որ քեզի
» հետ այնպէս խստութիւն խօսեցայ : Ղի-
» տես ինչ ցաւերէ ազատեցիր խեղճ նաւա-
» պետը . անիկայ կարծէր թէ ուրիշ տեղ
» կորսընցուցեր է իրեն պահարանը . ամե-
» նեկն մտքէն չէր անցուցած որ կարելի է
» նաւուն մէջ թողուցած ըլլայ . թէ որ
» դու գտած չըլլայիր նէ՛ ուրիշ ո՞վ պիտի
» գտնէր արդեօք : Ղն աս պահարանը ու
» շուտ մը նաւապետին ետեւէն վազէ » :

Վեոնը նաւապետին ետեւէն ընկաւ ու
վազելով դէպ 'ի անոր տունը գնաց ,
բայց զինքը հոն չգտաւ . հարցուց ծա-
ռային թէ ո՞ւր է տէրը : Ղառան առաւ
զինքը՝ դիմացի խահուէի խանութը տարաւ
ու իր տիրոջը առջևը հանեց , որ խանու-
թիւն մէկ անկիւնը նստեր՝ ձեռքն ալ լրա-
գիր մը բռնած ծխախոտ կը քաշէր : Ղ-
րեսին գոյնը տրտմութենէն պատ կտրեր
էր , և ատեն ատեն իր կեանքէն ձանձրա-
ցած մարդու մը պէս կը հառաչէր : Վեոն

բարև տուաւ ու հարցուց անոր թէ Յաղ-
թական ըսուած նաւուն նաւապետը ինքն
է թէ չէ : — « Այս եմ, ինչ կ'ուզես » , ըսաւ
նաւապետը սկար ձայնով մը : Աւոն հանեց
ծոյէն պահարանը ու ցուցնելով իրեն ը-
սաւ . « Արձանչնաս աս պահարանը, երկու
ժամ առաջ նաւուն մէկ անկիւնէն դտայ » :
— « Փանօք քեզ Ա՛ճ, աս իմ պահարանս
» է » կանչեց նաւապետը զարմանալով .
մէկէն երեսը զուարթացաւ, ու աչուրները
սկսան փարփիլ : Շուտ մը բացաւ պահա-
րանը, տեսաւ որ բան չէր պակսած մէջէն :
« Դու ո՞վ ես, բարեկամ, ըսաւ Աւոնին ,
» անունդ ինչ է : Դուն չըլլայիր նէ՛ քիչ
» մնաց բոլորովին պիտի յուսահատէի » :
« Անունս Աւոն է, ըսաւ նաւապետը .
» հօրս անունը Վաստոն » — « Ուրեմն ինչ
» փոխարէն կ'ուզես բարեկամ, ինչ կրնամ
» ընել քեզի, զրուցէ՛ . ես պատրաստ եմ
» ինչ որ ուզես նէ քեզի տալու » : —
« Պարոն, ես քեզմէ ուրիշ խնդրելիք չու-
» նիմ . ինծի բաւական վարձք է որ դրժ-
» բաղդ մարդու մը կեանքը ազատեցի » : —
« Ուրեմն ես ալ հիմա հետդ նաւահան-
» գիսսօք կուգամ, ըսաւ նաւապետը, ոնցի

» աս առաքինական գործքդ ամենուն յայտ,
» նի ընեմ. բայց նախ կ'ուզեմ որ քու
» կենդանութեանդ մէկ գինի մը խմենք :
» Աեցիր հոս , ես ուշանալուդ պատճառը
» մեծերուդ կ'իմացընեմ » :

Աւոն չէր ուզեր նաւապետին քովը ուշա-
նալ . անիկայ շուտ մը Վաղղիայի աղէկ գինի
բերել տուաւ : Աւոն առջի բերան չուզեց
խմել . բայց վերջը տեսնելով որ անիկայ շատ
վրայ կուտայ ու կ'աղաչէ , առաւ ու նաւա-
պետին առողջութեւն բարեմաղթուն ընելով
խմեց , ու երկայն ատեն մէկ մէկու հետ խօ-
սեցան : Ըս դիպուածս շուտ մը խահուէի
խանութին մէջ տարածուեցաւ , ամէնքը կը
վազէին ան առաքինի նաւաւարը տեսնելու :

Վաւապետը ելաւ խանութէն ու Աւո-
նին հետ նաւահանգիստը գնացին : Արբոր
մէկալ նաւաւարները իմացան իրենց ընկե-
րոջը ըրած առաքինութիւնը , չորս գին ա-
ռին ու ամէնքը մէկ բերան զինքը կը գո-
վէին : Վաւապետը մէկուն մէկալին բերնէն
Աւոնին ուրիշ առաքինութիւններն ալ լսե-
լով նորէն վրայ կուտար որ գոնէ ընծայի
տեղ առնէ տալու տտակը . բայց վեհանձն
նաւաւարը նորէն յանձն չտուաւ « Ըն

» ան , կրսէին մէկաշնոնք . ուլ զիտէ կա-
» ընել է թէ մէյսին ալ ասանկ բաղգի չես
» հանդիպիր . քսանըհինգ լերէ սթէրլինը
» քիչ բան չէ » : Աւոն ամենեին մտիկ չը-
բաւ , մնաս բարով ըսաւ նաւապետին ու
եղաւ գնաց :

Արկրորդ օրը նաւապետը եկաւ , և
աղուոր ոսկիէ ժամացոյց մը ու երկու ալ
արծրթէ տուփ տուաւ անոր , ու ըսաւ .
« Ան ասոնք բարեկամ ու յիշելիքի պէս
» պահէ , և քանի որ գործածես նէ՛ միտ-
» քրդ բեր ըրած բարի գործքդ : Աս ժա-
» մացոյցը իմն է , աս տուփերն ալ ընկերոջս
» է որ շատ կը փափաքի զքեզ տեսնելու
» որ իմ կեանքս ազատեցիր : Ղու իմ տու-
» նըս զիտես , երբոր պարասլ ըլլաս՝ հոն
» եկու տեսնուինք . ու երբոր կարտու-
» թին մը ունենաս նէ՛ ինծի վազէ , ասպա-
» հով եղիր որ ձեռքէս եկածին չափ քեզի
» կ'օգնեմ : Միտքս դրեր էի որ ասկէ ետ-
» քը հեռու տեղուանք ձամբորդութիւն չը-
» նեմ և քիչ մնաց որ ձակտիս քրտինքովը
» վաստրկածս բոլոր պիտի կորսուցնուէի ,
» ու տունս տեղս թշուառութեան մէջ պիտի
» ձգէի . շնորհակալ եմ քեզի որ աս փոր-

» Ճանքներուս դէմն առիր ու զմեզ ալ ա-
» զատեցիր » : — « Ինծի շնորհակալ մ'ըլ-
» լար , սպարոն , հասպա Աստուծոյ փառք
» տուր՝ որ զիս դրդեց իմ քրիստոնէական
» սլարտքս կատարելու , ըսաւ Վ Լոնը » :

Վ Լոնինն աս բարի գործքը Վ ղնտրայի
ըրազիրներուն մէջ գովեստով տարուեցաւ ,
ու ամէնքը մեծ համարմունք առին ան խեղճ
նաւաւարին վրայ :

Ղիմայի կիրակին Վ Լոն , ինչպէս որ
սովորութիւն ըրեր էր , գնաց սլարտէզին
մէջի մատուռը սլատարագ լսելու : Ճամբ
ըննալէն ետքը ան քահանան որ առջի ան-
գամուն իրեն հանդիպեր էր՝ քովը եկաւ ,
բարե տուաւ ու թեէն բռնեց տարաւ զինքը
ծառերուն տակի լայն ճամբուն մէջ , ծոցէն
ըրազիր մը հանեց , հարցուց Վ Լոնին թէ
արդեօք Վ ղնտրայի նաւաւարներուն մէջ իր
անունովը ուրիշ իրլանտայի ալ կայ թէ չէ :

« Չեմ կարծեր որ ըլլայ , ըսաւ Վ Լոն » :

— « Արեմն գուն էիր անցեալ երեքշաբ

» թի ան սլահարանը գտնողը , որուն մէջ

» հարիւր հազար ֆրանքնոց թղթէն աւե

» լի կայ եղեր , և շուտ մը կորսունցընող

» նաւապետին ձեռքը հասցընելէն ետքը

» փոխարէն մին ալ չես ուզած առնել » :
Մեռնը առանց սխտասխան տալու ժրպ-
տեցաւ : — « Այնեկ ինծի, ըսաւ ձերը,
» որ հոգեոր որդւոցս մէջ այսպիսի առա-
» քինի մարդ կայ եղեր . սպրիս որդեակ . աս
» բանիս մէջ քու ճշմարիտ քրիստոնեայ ըլ-
» լալդ ցցուցեր ես . գիտեմ որ դուն ալ աղ-
» քատես, բայց աղքատութիւն աւելի ընտրել
» ես քան թէ անիրաւութիւն : Ան օրէն ետ-
» քը նաւապետը նորէն տեսա՞ր թէ չէ » : —
« Հրամար ես, երէկ ալ տեսնուեցանք, ու
» աս ոսկիէ ժամացոյցն ու արծաթ տու-
» փերն ալ ինծի տուաւ՝ սպրսպրելով որ
» ստէպ իրեն տունը երթամ, բայց դեռ յար-
» մար ժամանակ մը չունեցայ . միտքս դը-
» ըրեր եմ որ աս իրիկուն երթամ » : —
« Այնպէս է որդեակ, երբեմն երբեմն զինքը
» տեսնելու երթաս նէ գէշ չըլլար . օր մը չէ
» նէ օր մը օգտակար կրնայ ըլլալ քեզի :
» Արբոր իր քովէն ելես նէ՛ հոս եկու,
» քանի մը բան ունիմ քեզի զրուցելու » :
Մեռն ելաւ գնաց նաւապետին տունը,
որ ամենայն սիրով ընդունեցաւ զինքը, և
ընկերոջը դիմացն ալ հանեց իր ազատիչը .
ետքը նախաճաշիկ բերել տուաւ, ու Մեռ-

նին նորէն նորէն ապրսպրեց որ ամէն կիրակի զանց չընէ զայ : Վեռն նախաճաշիկ ընելէն ետքը ելաւ զնաց քահանային քովը , որ իրեն զալուն կըսպասէր : Պատուական ծերը իրեն քիչ մը խրատ խօսելէն ետքը՝ հանեց տուաւ անոր Թովմայի Գեմեացոյ գիրքը , ապսպրելով որ երբեմն երբեմն անկէ մէյմէկ գլուխ կարդայ : Վեռն քահանային ձեռքը սրագնելով առաւ ան գիրքը՝ որ իրեն համար զանձ կ'արժէր : Տուն հասաւ չըհասաւ , սկսաւ կարդալ ու մտածել հետագայ կտորը . « Արբեմն երբեմն տրտմութիւն » ունենալը մեզի օգտակար է . վասն զի » նեղութիւնը մարդուս կը յիշեցընէ որ ար » սորանաց մէջ է , ու իր յոյսը աս ան » ցաւոր աշխարքիս բաներուն վրայ պի » տի չգնէ » : Վեռն շատ զարմացաւ աս խօսքերուս վրայ , և առաջագրեց որ ամէն իրիկուն սրտկելէն առաջ մէյմէկ գլուխ կարդայ ան գրքէն :

Ան գիրքը կարդալով նոր նոր առաքի նութիւններով զարդարուեցաւ . զԱստուած սիրելուն , աշխարհքէ հեռանալուն , ու ինք զինքը բոլորովին ուրանալուն կերպը սորվեցաւ : Շատ անգամ յոգնած գաղրած ու

Հողին բերանը եկած տուն դառնալով քիչ մը հանգչելէն ետքը՝ կը ջանար մէկ գլուխ մը ան գրքէն կարդալ, որ իրեն զուարճութիւն մը դարձեր էր։ Չէր գիտեր թէ ինչ կերպով երախտագէտ ըլլայ ան սլատուական քահանային, որ իրեն ջյուցեր էր խաղաղութեան ու մխիթարութեան ճամբան։ Ան շատ անգամ հիմակուան կեանքը Վրանտայի տնակին մէջ անցուցած կենացը հետ կը բաղդատէր. և թէպէտ առանց սիրտը ելելու չէր կրնար մտածել հայրենեացը վրայ, բայց իրեն կ'երևնար թէ հիմա ուրիշ ատեններէն աւելի երջանիկ էր, քանի որ իր գէշ բնութիւնները թողուցած՝ Աստուծոյ հետ հաշտուած էր։ Խղձմտանքին հանգստութիւնը՝ մարմնոյն անհանգրտութեան տեղը կը բռնէր. և իրեն քաշելու վիշտերը բան մը չէին երևնար՝ քանի որ կը մտածէր ան մեծամեծ տանջանքներն որ հարկաւ սլիտի քաշէր՝ թէ որ իրեն մոլութեանցը գերի մնար։ Միայն քանի որ իրեն մինակութիւնը կը տեսնէր սիրտը շատ կը կոտրէր. բայց ան ատենն ալ Յիսուսի խաչին վրայ քաշած համբերութիւնը կը մտածէր ու կ'ըսէր. « Բրիստոս տէրն մեր մեռ

» նելէն վերջը յարութիւն առաւ , կարելի
» է թէ ինծի ալ կ'ողորմի որ այսչափ փոր-
» ձանքներէն ետեւ երջանկութիւնս նորէն
» գտնեմ . կը յուսամ որ օր մը զանոնք նորէն
» տեսնեմ և սլատմեմ անոնց Աստուծոյ իմ
» վրաս ցցուցած հրաշքները : » Ամէն իրի-
կուն ասանկ բարի մտածութեամբ քուն կ'ը-
լար . առաւօտն ալ կանուխ կ'ելլէր , նոր
համբերութիւն մը իր բանին գործքին ձեռք
կը զարնէր , և օրէ օր Աստուծոյ ողորմու-
թեանը կը սպասէր :

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻՆ ՎԵՐՋԸ :

4822-4827

2013

